№ 66 ՀԻՆԳՇԱԲԹԻ 27 ՄԱՐՏԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 27 ՄԱՐՏԻ № 66

ՄՇԱԿ

ԽՄԲԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՐՏԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 9 ՌՈՒԲ.

Ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը—85 կ.։ Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 թվի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրձինի։

ՊԱՐՈՒԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՐԾՐՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ԾԻԾԱՂԻ ԵՐԵԿՈՅ

Ուրբաթ, մարտի 28-ին 1914 թ., կը կայանայ երկրորդ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ

„Кривое зеркало"

հետևեալ ծրագրով

I

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Երգիծաբան. դասախօսութիւն Հայոց Դրամ. արուեստի մասին Սայ-Մանի և Գ. Երեցեանի։ Կը կարդայ դերասան ԻՍ. ԱԼԻԽԱՆԵԱՆ

Դասախօսութեան ընդմիջումներում կը խաղացվեն հետևեալ պիէսները.

1) ԱՇՈՏ՝ Թագաւոր հայոց, ողբերգութիւն ըստ Կարինեանի
2) ԳԻՇԵՐՎԱՅ ՍԱՐԲԸ ԽԵՐ Է՝ կատակերգութիւն ըստ Սունդուկեանի
3) ՉԱՐ ՈԳԻ՝ դրամա ըստ Շիրվանզադէի
4) ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐ՝ սիմվօլական պիէս ըստ Ահարոնեանի
5) ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱ՝ դրամա 5 արար. ըստ Շանթի
6) ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ՝ ըստ Շանթի

II

ՕՐՎԱՅ ՉԱՐԻՔԸ ու ԲԱՐԻՔԸ

1) ՖՈՒՏՈՒՐԻԶՄ՝ միակ հայ ֆուտուրիստի դասախօսութիւնը, պատկերազարդած դեմօնստրացիաներով՝ բառահիւս, ձայնագոռ, տառկաշարժ և գունագիր։
2) ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԵՏՈՒԹԻՒՆ՝ կամ մոգական լապտերի չարաճճիութիւնը։

III

ԿԵՆԴԱՆԻ ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ

20,000 վերստ Եւրոպայում, կամ «Աշխարհէ աշխարհ», ճանապարհորդութիւն Գաբրիէլ Լևոնեանի։ Ցոյժ ծիծաղաշարժ պատկեր 12,060 մէտր երկարութեամբ, կատարվում է Մակս Լինդերի անմիջական հսկողութեան տակ։

IV

Ընդմիջումներին կը ստացվեն ՀԵՌԱԳԻՐՆԵՐ սեփական թղթակիցներից և կը հրատարակվի «ԿԱՂԴԵԻ» միօրեայ երգիծաբանական լրագիրը։

Տեղերի գները էժանացված են ◆ Սկիզբը երեկոյեան ժամը $8^{1}/_{2}$-ին

(ա. օ.) 283. 2—1

ԿԻՐԱԿԻ ԵՒ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՄԱՐՏԻ 30-ԻՆ ԵՒ 31-ԻՆ

ԿՈՎԿ. ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿ. ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐՈՒՄ

(Պասկեվիչի փող. № 13) ◆ տեղի կունենայ

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ եւ ՎԱՃԱՌՔ

աշակերտների պատրաստած ձեռագործների՝ կանանց և մանկական զգեստների, բլուզների, շրջազգեստների, սեղանատան և այլ սպիտակեղէնի, նաև գլխարկների, գուլպաների, ժերսէների, ֆուֆայկաների և այլն։

Ցուցահանդէսը բաց է առաւօտ. ժամը 10—3-ը։

(կ.) առ. ՄՈՒՏՔԸ ՁՐԻ Է։ 282. 2—1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ԷԼԵԿՏՐՕ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ և ՊԱՀԵՍՏ

„ԷՆԵՐԳԻԱ"

«Սէվերնի Նոմէրնէրի» Շէնքը, Նիկօլայեվսկի պեր., տէլէֆօն № 8—89.

ԱՐՄԱՏՈՒՐ էլեկտրական, արտասահմանեան ամենալաւ ֆաբրիկաներից, նորագոյն մօդելների։

ՋԵՌՈՒՑԻՉ ՊՐԻԲՕՐՆԵՐ և ԱՊԱՐԱՏՆԵՐ

ստացված են մեծ քանակութեամբ։

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՇԱՏ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ

(կ.) առ. 277. 2—2

ԱՆՍԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տելէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։

Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշեր
Ս. Պ. Շահպարոնեանց

(հ.կ.) առ. 868. 100—40

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

(ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)

ՀԱՅԿ. ԴՐԱՄ. ԽՄԲԱԿՑ.

Այսօր, հինգշաբթի, մարտի 27-ին

Մասնակց. դերասանների կըներկայացնէ—ՖՈՐԴԻՆԻ յայտնի

ՍԱՏԱՆԱՅ

Դրամա 4 գործ. 5 պատկերով։

Մասնակցում են—տ. տ. Արմէնեան-Դուրեան, Զաբէլ, Յասմիկ, օր. Օհան-Բաբեան, պ. պ. Արմէնեան, Գաւրօշ, Երամեան, Յարութիւնեան II, Սերժ և ուրիշ.։

Սկիզբը երեկոյեան ժամը $8^{1}/_{4}$-ին։

Տեղերի գները 5 կ.-ից մինչև 50 կ.։

Ռեժիսեօր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ

Վարչութեան հերթապահ անդամ՝ ՄԻՔ. ՍՏԱՄԲՈԼՑԵԱՆ

առ. 281. 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ

(Ասսիստենտ Բերլինի պրօֆ. Պօզնէրի)

վերադառնալով արտասահմանից, ներկայ տարվայ մայիս ամսից կը վերանորոգէ հիւանդների ընդունելութիւնը ՊԵԱՏԻԳՈՐՍԿՈՒՄ։

(կ. հ.) առ. 104. 50—14

ԿԱՐՍՈՒՄ

ԲԺԻՇԿ

Լ. Գ. Տէր-Գրիգորեանց

Մասնագէտ կանացի և վեներական հիւանդութիւնների, Միխայլովսկայա փող. տուն Շավերդեանի, նոտարի գրասենեակի մօտ։ ԸՆԴՈՒՆՈՒՄ է երեկ. ժամը 5—6-ը։

(կ. հ.) առ. 253. 5—3

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐՑ Է

Գնդապետ Պլետնեօվի դասախօսութիւնը, որի ամփոփ բովանդակութիւնը տալիս ենք այսօր «Մշակի» մէջ, որքան և նոր տուեալներ, նոր լուսաբանութիւն չէ մտցնում հայկական հարցի մէջ, որոնք անծանօթ լինէին մեզ հայերիս, բայց ունի այն կարեւոր նշանակութիւնը մեզ հայերիս համար, որ, վերջապէս, պաշտօնական և ոչ-պաշտօնական Ռուսաստանը, ռուս հասարակական կարծիքը կազմել է ճիշդ գաղափար հայկական հարցի էութեան մասին, ըմբռնել է, որ, արդարև, հայկական հարցը ռուսական հարց է, որ ռուս ժողովրդի ոչ միայն շահերը, այլ և խղճմտանքը պահանջում է պաշտպան դուրս գալ մի ազգի, որ առ Ռուսաստանն ունեցած իր անկեղծ սիրոյ և անձնուիրութեան ապացոյցներն է տուել բազում անգամ։ Ռուսական դիպլոմատիան, որ պահ մի շեղվեց Ռուսաստանի մեծ վերանորոգիչ Մեծն Պետրոսի քաղաքականութիւնից և թողեց, որ քրիստոնեայ հայ ժողովուրդը անխնայ կոտորվի, ջարդվի առանց նրան որևէ օգնութիւն հասցնելու, այսօր զգում է իր գործած մեծ սխալը, և այժմեան դիպլոմատիան ըմբռնում է, որ պարտաւոր է քաւել իր նախորդի յանցանքը, որ յանցանք էր և ռուսական ազգային քաղաքականութեան ու կենսական շահերի դէմ։

Հասել է վճռական ժամը, երբ հայ ժողովուրդը պէտք է մի անգամ ընդմիշտ կամ ազատագրվի թիւրքական դաժան լծից և ստանայ մարդկային իրաւունքներ, կամ պէտք է վերջնականապէս անհետանայ այն երկրից, ուր ապրել է, որը ոռոգել է իր ջերմ արիւնով, քրտինքով հազարաւոր տարիներից ի վեր։

Արդ, հայկական հարցի լուծումը Ռուսաստանի խղճմտանքի գործն է և այդ խղճմտանքին էր, որ այնքան ահեղ կոչ արեց պրոֆէսոր Պլետնեօվը։

Հ. Առաքելեան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

— o —

ՔՈՒՐԴԱԿԱՆ ԽԼՐՏՈՒՄՆԵՐ

Կ. Պոլսից հեռագրում են մայրաքաղաքի թերթերին.

«Բիթլիսի մօտ ջարդված քիւրդական պարագլուխները ապաստանեցին ռուսաց հիւպատոսարանը։ Նրանց թւում է մի մոլլա, որ իրան յայտարարել է քիւրդական փադիշահ Սելիմ I անունով։ Դեսպանատունը Բ. Դրան պահանջին՝ յանձնելու այդ ապաստանածներին՝ պատասխանեց կտրուկ մերժումով։ Այդ հողի վրա հնարաւոր է համարվում, որ դիւանագիտական լուրջ բարդութիւններ առաջ գան Թիւրքիայի և Ռուսաստանի միջև։

«Չորս հազար քիւրդեր շրջապատում են Բիթլիսը։ Նրանք արդէն գրաւել են Խնդրակատարի հայկական վանքը։ Շէյխ մոլլա Սելիմը և Շէհաբէդդինը պրոպագանդա են անում սրբազան պատերազմ յայտարարելու ընդդէմ հայերի։

«Քիւրդական ժանդարմերիան անցել է ապստամբների կողմը և կոտորում է հայերին Մուշի, Գիկի, Դիարբէքիրի, Վանի և Սամսոնի շրջակայքում։ Բիթլիսի նահանգապետը հովանաւորում է քիւրդերին»։

—

Կ. Պոլսից վերջին հեռագիրը տեղեկացնում է, որ հայոց պատրիարքը ստացել է մի հերթական հեռագիր այն մասին, թէ Բայազէտից մի քանի վերստ հեռաւորութեան վրա կատաղի կռիւ է սկսվել թիւրքաց կառավարական զօրքերի և քիւրդերի միջև։ Քիւրդական հրոսակախմբերն ունեն գնդացիրներ և առհասարակ լաւ զինված են։ Քաղաքում սարսափ է տիրում։ Քրիստոնեայ ազգաբնակութիւնը թաքնվել է եկեղեցիներում։ Կ. Պոլսի ռուսաց դեսպան Գիրսը այդ առիթով շտապով առաջադրութիւն արեց Բ. Դրանը և պահանջեց խիստ միջոցներ քիւրդերի դէմ։

—

Կ. Պոլսից հերթական հեռագիրը հաղորդում է, որ շտապով զօրքեր են դիմում դէպի Բիթլիս և Բայազէդ՝ օգնելու այնտեղի կառավարական զօրամասերին։

Հայ ազգաբնակութիւնը ահաբեկված է։

—

Քիւրդական վերջին ապստամբութիւնը հայկական նահանգներում սպառնում է ստանալ ընդարձակ ու լուրջ բնաւորութիւն։ Նշանները ցոյց են տալիս, որ Թիւրքաց կառավարութիւնը կամ անկարողանում է զսպել շարժումը կամ թէ դիտաւորեալ կերպով ձեռնպահ է մնում կտրուկ միջոցներ ձեռք առնելուց, որպէս զի քիւրդական հրոսակային խմբերը հնարաւորութիւն ունենան ասպատակել հայկական գաւառները։ Դրութիւնը չափազանց վտանգաւոր է դառնում։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ԵՒՐՈՊԱՆ

(Դասախօսութիւն Վ. Դ. Պլետնեօվի)

Այս դասախօսութիւնը, որ տեղի ունեցաւ Արծրունեան թատրոնում, երեքշաբթի, մարտի 25-ին, գրաւել էր մեծ թւով ունկնդիր հասարակութիւն։ Ներկայ էին Թիֆլիսի գրեթէ ամբողջ հայ ինտելիգենցիան, ուսուցչութիւնը, վաճառականութեան ներկայացուցիչներ և բազմաթիւ օտարազգիներ՝ ռուս, վրացի և թուրք։ Ներկայ էին և փոխարքայի օգնական գեներալ Միշլաեվսկին, Մեսրոպ և Մաթէոս եպիսկոպոսները։ Դասախօսութիւնը սկսվեց ժամը ուղիղ $8^{1}/_{2}$-ին երեկոյեան։

Ներկայումս հայկական հարցը,—սկսեց պրոֆ. Վ. Դ. Պլետնեօվ,—որպէս կենսական, անյետաձգելի հարց նշանակութիւն ունի ոչ միայն հայերի համար, այլ և ռուսների, ռուսական շահերի համար։ Հայկական հարցը պատահական մի երևոյթ չէ. նա չէ կրում պատահական բնոյթ։ Դեռ 200 տարի առաջ Ռուսաստանին ծանօթ է այդ հարցը. 200 տարի առաջ Ռուսաստանը զբաղվեց այդ հարցով և դրեց այն ուղիղ տրամաբանական գծի վրա, երբ 17-դ դարի վերջերը Իսրայէլ Օրի լիազօրութիւն ստացաւ պարսկահայերի և թիւրքահայերի կողմից՝ Արևմտեան Եւրոպա գնալու, մեծ պետութիւնների ուշադրութիւնը հրաւիրելու հայերի ծանր կացութեան վրա։ Ֆրանսիական և անգլիական արքունիքներում նա ոչ մի առանձին համակրութեան ու ուշադրութեան չարժանացաւ. բայց բաւարական կառավարութիւնը իր բարոյական պարտքը համարեց աջակցել հայերին։ Գերմանական կայսրը նոյնպէս օգնութիւն խոստացաւ և նամակներ տալով Իսրայէլ Օրին առ ռուսական կայսրը՝ յայտնեց, որ հայերի դրութեան բարւոքումը առանց ռուսների օգնութեան չէ կարող լինել։ Այդ ժամանակներում Ռուսաստանում իշխող Պետրոս Մեծը իր թափանցող մտքով հասկացաւ, որ ի զուր տեղը կործանվում է մի ժողովուրդ, և մտածեց օգնել նրան. բայց այդ օգնութիւնը Եւրոպայից յուսալ չէ կարելի, օգնել կարող է միայն Ռուսաստանը։ Իսրայէլ Օրի մահից յետոյ Ռուսաստանը դիմում է ակտիվ միջոցի։ Պետրոս Մեծի շվէդների հետ ունեցած պատերազմից յետոյ, ռուսական զօրքը շարժվում է դէպի Անդրկովկաս՝ Բագուն և Կասպից ծովի ափերը գրաւելու։

Այդ առաջին քայլն էր հայերի ազատագրութեան համար, առաջին մոմենտն էր, որ սկիզբ դրեց հայերի ազատագրութեան, հայկական հարցի։

Պետրոս Մեծի մահից յետոյ, նրա յաջորդները սխալ ճանապարհով տարան հայերին ազատելու քաղաքականութիւնը և նրանց կազմած ֆանտաստիկական ծրագիրները յօդս ցնդեցին։ Դրանից յետոյ Նիկոլայ I դիմեց դէպի Կովկաս, հայերին ազատելու համար Պարսկաստանի և Թիւրքիայի դէմ պատերազմելով։

18-րդ դարի սկզբում Եւրոպայի հասարակական կարծիքը, գլխաւորապէս Անգլիան պաշտպանում էին Թիւրքիային և աշխատում էին վերացնել ռուսական ազդեցութիւնը հայկական հարցում։

Երկար տարիների անյաջողութիւններից յետոյ, Ռուսաստանի միջամտութեամբ որոշվում է բարենորոգումներ մտցնել Հայաստանում և բարենորոգումների գործը դնել վերահսկողութեան տակ։ Բայց այդ ծրագիրն էլ իր նախորդների նման անպտուղ հետևանք է ունենում։ Նոյնպէս անպտուղ է անցնում և Բեռլինի կոնգրեսի կազմած բարենորոգումների ծրագիրը, որի ոչ մի կէտը չի իրագործվում։ 1877 թ. անգլիական կառավարութեան կողմից Երզրում են ուղարկվում անգլիական ժանդարմներ, այնտեղ եւրոպական կարգ հաստատելու համար, բայց այդ բանը միանգամայն անհնար եղաւ, որովհետև Թիւրքիայի այդ և շրջակայ վիլայէթներում տիրում էին այնպիսի կարգեր, որոնց վերացումը անկարելի էր որևէ կերպ։

Վերջապէս Սան-Ստեֆանոյի դաշնագիրը իրաւունք է տալիս ընդարձակ բարենորոգումներ մտցնել Հայաստանում։ Այդ ժամանակներում Ռուսաստանը սրտանց ցանկանում էր հայերի վիճակը թեթևացնել Թիւրքիայում. այդ առիթով դաշնագրի մէջ նոյնիսկ կայ մի առանձին կէտ. բայց Ռուսաստանի այդ բարի ցանկութիւններին, մտադրութեանը դարձեալ արգելք հանդիսացաւ Անգլիան։ Եւ միշտ Անգլիան, որը, Կիպրոսի դաշնագրի համաձայն, խոստացել էր հսկել Թիւրքիայի ամբողջութեան, անձեռնմխելիութեան վրա։

1895—1896 թ. թ. Հայաստանում, գլխաւորապէս Սասունում, կատարվող կոտորածների ժամանակ, Պետերբուրգի անգլիական դեսպանը այդ կոտորածների մասին տեղեկութիւններ է հաղորդում լորդ Սոլզբերիին, առաջարկելով միանալ Ռուսաստանի հետ հայերին օգնելու գործի մէջ։ Այն ժամանակվայ մինիստր-նախագահ լորդ Ռօզբերին մերժեց. բայց նրան յաջորդող լորդ Սոլզբերին ընդունեց այդ առաջարկը, սակայն ռուսաց արտաքին գործերի մինիստր իշխ. Լօբանով-Ռոստովսկին պատասխանեց, որ պատրաստ է ընդունել այդ առաջարկը, եթէ միայն Անգլիան երաշխաւորի, որ հայերը Հայաստանից չեն դարձնի մի երկրորդ ապերախտ Բոլգարիա Ռուսաստանի դէմ։ Անգլիան չը տուեց այդ երաշխիքը, և Ռուսաստանը լքեց հայերին։

Բայց այդ օրից Անգլիան փոխում է իր՝ դէպի հայերն ունեցած անբարեացակամ տրամադրութիւնը և աշխատում է հայերի օգտին։ Դրան գլխաւորապէս նպաստել էր, ի հարկէ, Ռուսաստանը, որ Պետրոս Մեծի օրերից սկսած գործում էր հայերի օգտին. դրան ապացոյց անգլիական «Կապոյտ» և «Դեղին» գրքերը։

Մինչ այդ՝ Գերմանիան, որ ուշադրութիւն չէր դարձնում հայերի դրութեան վրա, չէր հետաքրքրվում հայկական հարցով և մոլի պաշտպան էր հանդիսանում Թիւրքիային, այնտեղում իր ազդեցութիւնը և շահերը ընդարձակելու նպատակով, ինչպէս օրինակ Բաղդադի երկաթուղագծի կոնցեսիան ձեռք բերելը, այդ ամենից յետոյ, նա ևս, այսինքն Գերմանիան, գիտակցեց, որ Թիւրքիայում ունեցած իր շահերը, եթէ ոչ մեծ, գոնէ որոշ չափով կախում ունեն հայերից։

Դեռ 1913 թ. Գերմանիան աշխատում էր, որ Ռուսաստանը չը մտնի Անատոլիա և թիւրքերի վրա ճնշում գործ չը դնի։ Գերմանիան կամենում էր ոչ թէ Թիւրքիայի ամբողջութիւնը պահպանել կամ նրա անձեռնմխելիութիւնը ապահովել, ո՛չ։ Ռուսաստանի ազդեցութեանը հակառակ լինելով, Գերմանիան ի նկատի ունէր իր շահերը։ Եթէ Ռուսաստանը մուտք գործէր Անատոլիա կամ ազդեցութիւն ձեռք բերէր այնտեղ, այն ժամանակ Գերմանիայի շահերը որոշ չափով կը վտանգվէին։ Եւ այդ պատճառով Գերմանիան պատրաստ էր ամեն միջոցի դիմել՝ իր շահերը պաշտպանելու համար։ Նոյն իսկ եթէ որևէ պետութեան զօրք մտնէր Փոքր Ասիա, Գերմանիան պատրաստ էր դիմադրելու։ 1913 թ. Գերմանիան մահացու թշնամի էր ամեն տեսակ բարենորոգումների։ Բայց ինչ անել, որ հայերը չենթարկվեն յաճախակի կոտորածների ու ջարդերի։ Գերմանացի մի գեներալ ասում է՝ հայերին կարելի է բնակեցնել Բաղդադի գերմանական երկաթուղագծի մօտ, որովհետև հայերը լաւ բանւորներ են։ Եւ այդպիսով Գերմանիան կարող է նրանց պաշտպանել ամեն տեսակ յարձակումից։

Վերջապէս, երբ վերջերս մեծ պետութիւնների, որոնց թւում և Գերմանիայի, կողմից ընդունվեց Հայաստանում բարենորոգումներ անց կացնելու անհրաժեշտութիւնը, Գերմանիան դարձեալ, իր շահերի և Ռուսաստանի ազդեցութիւնը Թիւրքիայից հեռու պահելու նպատակով, դրդում է Թիւրք պետութեանը հայկական վիլայէթների հաշւի մէջ մտցնել և Տրապիզոնի վիլայէթը, որ 1 միլիօնից աւելի մուսուլման բնակչութիւն ունի, որպիսի թիւը հայկական միւս վիլայէթների թիւրք բնակիչների թւի հետ միասին կը կազմի մի խոշոր թիւ, որ կը գերազանցի հայերի թւից։ Այդ դրդումը կատարվում է այն պատճառով, որ յետոյ ասեն թէ՝ այ, տեսէք, հայկական վիլայէթների բնակչութեան մեծամասնութիւնը կազմում են թիւրքերը. էլ այստեղ ինչ գործ ունեն օտար մարդիկ, օտար ազդեցութիւններ։

Մի խօսքով, Եւրոպան այնպիսի կարեւոր ուշադրութիւն չը դարձրեց հայերի ազատութեան վրա, ինչպէս Ռուսաստանը։

Նա, Ռուսաստանը, չէր կարող անտես ձեւանալ իր հարևան ժողովրդի կործանումը, ճնշումը և սպառացումը տեսնելով։ Նա աշխատեց, որ իր հարևան ժողովուրդը չը կորչի, որովհետև դրա հետ միասին կարող էին կորչել և Ռուսաստանի շահերը Հայաստանում։ Եւ Ռուսաստանը ամեն ջանք թափեց բարենորոգումներ մտցնել, որպէսզի իր շահերը հաստատ հող բռնեն այնտեղ և չը կորչեն։ Բացի այդ՝ Ռուսաստանը չի կարող տանել այն կարգերը, որոնց մէջ ապրում է մեր հարևան հայ ժողովուրդը՝ անասելի տանջանքների ու զրկանքների ենթակայ։

Հայերը Ռուսաստանին մատուցել են երախտագիտութեան արժանի ծառայութիւններ։ 1828 թ. պատերազմին ռուս զօրքի մէջ, որպէս կամաւորներ, գործում էին տասնեակ հազար հայեր. և Ռուսաստանը գիտակցելով նրանց, հայերի, ծառայութիւնները՝ չի կարող չէզոք դիրք բռնել հայերի ողբալի կացութեան հանդէպ։

Ռուս առաջաւոր ինտելիգենցիան միշտ ձգտել է և կողմնակից է եղել ժողովուրդների ազատագրութեան։ Հերցէն, Բակունին, Օգարեօվ, Չերնիշեվսկի և ուրիշները աշխատել են այդ ուղղութեամբ։ Յիշեցէք Գարշինին, որ կամաւոր կերպով մասնակցեց Բուլգարիայի ազատագրութեան պատերազմին։

Այսօր եւս ռուս առաջաւոր ինտելիգենցիան անկարող է լուռ ականատես լինել հայերի վրայ գործադրվող ճնշումներին ու բռնութիւններին։

Վա՜յ այն տէրութեան, որ անտես է ձեւանում իր հարևան ժողովրդի տանջանքներին։

20-դ դարի ռուսական ինտելիգենցիայի խիղճը չի կարող դիմանալ այն վայրագութիւններին ու բռնութիւններին, որոնց ենթակայ է հայ ժողովուրդը Հայաստանում, Թիւրքիայի գերիշխանութեան տակ։

— Ռուս կառավարութեան և ռուս ինտելիգենցիայի պարտքն է,—վերջացրեց իր խօսքը պ. Պլեխանով,—թեթեւացնել մեր հարևան եղբայրների վիճակը Հայաստանում։

Լեփ-լեցուն լսարանը երկարատև ծափահարութեամբ վարձատրեց դասախօսին։

Դասախօսութիւնը վերջացաւ ժամը 12-ին։

Ս. Ր.

ՔԵՕՓՐԻ-ՔԵՕՅԻ ԱՂԷՏԸ

Հասան-Կալէ, 6 մարտ

Այս խնդիրը, որ ամբողջ Բարձր Հայքի հայութիւնը յուզած է, ստիպեց ձեր թղթակցին անմիջապէս Քեօփրի-քեօյ շտապել և խնդրին ու իրադարձութեանց տեղն ու տեղը ծանօթանալ։ Ահա այն բոլոր մանրամասնութիւնները, զորս հանած եմ պաշտօնական և անպաշտօն աղբիւրներէ, տեսած ու լսած եմ անձամբ և ականատեսներէ։

Փետր. 14-ին Իւզվերան կորդոնէն Քեօփրի-քեօյ կը վերադառնայ ժանդարմ մը, որ հոն բռնուած փախստական թիւրք զինուորներ (յանձնելու) տարած էր իրենց Քեօփրի-քեօյի կորդոնէն։ 14-ի եր. ժ. 12-ին ժանդարմը կուգայ ճամբու վրայ գտնուած Էմրագոմ թիւրք գիւղը, ուր (ինչպէս կըսեն գիւղի և շրջակայ գիւղերու բնակիչները՝ սիրական մը ունէր) մի քանի ժամ մնալէ ետք ճամբայ կելնէ դէպի Քեօփրի-քեօյ։

Սրճարանապետը կը զգուշացնէ զինքը, կը թախանձէ կէս-գիշերին տեղէն չշարժիլ, ճամբաներու վտանգաւոր ըլլալը նկատել կուտայ, բայց ան անդրդուելի կը մնայ իր որոշումին մէջ և կերթայ։

Ճամբան՝ անծանօթներու կողմէ այդ ժանդարմը կը խեղդուի և կը ձգուի Արաքսի կամուրջին մօտ՝ գետի սառոյցին վրայ և այն ալ Քեօփրի-քեօյի կողմի ափին, հայ գիւղացոց սահմանին մէջ։

Էմրագոմցի թիւրքեր կամուրջէն անցնելով կը տեսնեն ոստիկանի դիակը, իմաց կուտան այդ մասին Քեօփրի-քեօյի ոստիկանութեան, որ հոն պահապան ոստիկան մը դնելով իր կարգին եւ իմաց կուտայ տեղւոյս՝ Ռումէլիէն բարեկարգչի հանգամանքով հոս եկած արնաւուտ միւլազըմ Հաֆըզ Իսմայիլին։ Վերջինս հարցաքննիչի, բժշկի և քանի մը ժանդարմներու հետ անմիջապէս դէպքին վայրը կերթայ և քննութիւն կը կատարէ հայերու մէջ։ Էմրագոմցիներէն միայն սրճարանապետը հարցաքննութեան կենթարկուի և կը հաստատուի անոր կողմէ ժանդարմին ըրուած զգուշացումներն ու յայտարարութիւնները։

Հարցաքննութենէն ու տեղեկագիր պատրաստելէն ետք դատական քննիչն ու զինւ. բժիշկը տեղս կը վերադառնան, իսկ Հաֆըզը կը մնայ Քեօփրի-քեօյ, իր ստոր դաւերը տեղական հայերու մէջ նիւթելու, հայակերութեան ցասումը անոնց գլխուն պայթեցնելու։

Տեղացի երկու ձկնորսներ, որ իրենց ընտանեաց օրուան պարէնը հայթայթելու համար ձկնորսութիւնը իրենց արհեստ ըրած են, անմիջապէս կը հետապնդուին Հաֆըզի կողմէ, տուներնին կը խուզարկուի, և զմելի անգամ տուներուն մէջ չգտնուելէ յետոյ՝ կը բանտարկուին զատ-զատ տեղեր։

Հարցաքննութեան ատեն ձկնորսներու գլխուն ամեն ինչ կը բերէ այդ բարեկարգիչը (?). ծեծ, հայհոյանք, դին, հաւատ, կրօնք և ամեն ինչ կանարգէ, խոշտանգման կենթարկէ և ծեծի ու բռնութեան տակ կը ստիպէ, որ անոնք ըսեն, թէ իրենք են ոճիրի հեղինակները։

Անմեղ ձկնորսները Քեօփրի-քեօյէն կը փոխադրուին Հասան-Կալէ և հոն ծեծի, անարգանքի ալ աւելի զարհուրելի ձևերուն կենթարկուին։ Խեղճերէն մէկը չկարողանալով տանիլ Հաֆըզի պատճառած զարհուրելի տանջանքները՝ կը ստիպուի իբր թէ ըսել, թէ իր ընկերն է ըրողը և գիւղի քէհեայի տանն է անոր հրացանը, և երբ այս յայտարարութիւնը առիթ կը ծառայէ անմիջապէս խուզարկութեան ենթարկելու և քէհեայի տունը, զայն ալ ձերբակալելու և բանտ դնելու։

Այս ամենէն յետոյ այդ Հաֆըզը զօրք կը բերէ մի քանի բէօլիւք, գիւղը կը շրջապատէ և կը սկսի իր [illegible] շահագործումը՝ անիրաւ հետապնդումները, ապօրինի գործողութիւնները։

Նախ ձկնորսներու կիներու հետ 3 հայ կին ալ կը ձերբակալէ և առանձին-առանձին ժանդարմներու հետ գիշերանց այստեղ կուղարկէ, բան մը, որ երբէք տեսնուած չէր Համիդի օրերուն իսկ, ուր մնաց թէ սահմանադրութեան օրով կը տեսնուէր։

Մայրերու և ծծկեր երախաներու անգամ չէին խնայեր և ցուրտ ձմրան 4 ժամուան ճամբան 8 ժամու մէջ քալցնելով տեղս էին բերեր և այն ալ նորէն զատ-զատ և առանձին-առանձին ժանդարմներու ուղեկցութեամբ։

Տեղիս կայմակամին՝ Ռուսաստանէն նոյն պահուն հոս ժամանումը լրացուց պատկերին ամբողջութիւնը։

Այդ մարդը, որ, ինչպէս կըսեն, որոշ պետական միսսիայով գացած էր Ռուսիա և անյաջողութեան էր հանդիպած, իր անյաջողութեան բոլոր զայրոյթը թափեց հայերուս գլխուն։

Այո, ինչ Հաֆըզը մինակ համարձակութիւն չէր ունեցած ընելու, անոր ներկայութիւնը և բարի տրամադրութիւնները (?!?) օգնեցին Հաֆըզին նոր ի կատար ածելու, և անոնք թափեցին իրենց թոյնը հայերուս գլխուն՝ քակելով տներ, լկտի կերպով կանանց խուզարկելով և հայու նամուսին անգամ դիպչելով։

Ես իմ աչքովս տեսայ խուզարկուած տուները. կատարեալ աւերակի պատկերը կուտային. խիղճ, օրէնք, արդարութիւն և ամեն ինչ մեռած է եղեր... Կանայք երախաները գրկած՝ աղիողորմ արտասուք կը թափէին և իրենց վերջը եկած կը համարէին։ Այս մարդիկ ստորագրութիւն կը հաւաքէին, որ գաղթեն Ռուսաստան, բայց համաձայնութիւն չկար. Ծերերը կաղօթէին։ «Տէր, անցո զբաժակս յինէն» կըսէր ալեւորներէն մէկը՝ արտասուքը աչքերուն պատմելով իր կրօնին, օրէնքին հասցուած անարգանքներուն մասին։

— Կայմակամ էֆէնդին (??!) այնպիսի բաներ է ըրեր, որ սրիկաներուն անգամ յատուկ չէ, ուր մնաց թէ մի պետութեան պաշտօնեայի և այն ալ կայմակամի,—կըսէր գաղթին հակառակող հիւանդոտ երիտասարդ մը։

— Աղբար, մեզի փրկութիւն չկա՞յ, հայ քրիստոնեան միշտ պիտի այսպէս տանջուի... մեզի օգնող ձեռք մը չպիտի՞ դուրս գայ,— աւելի աղիողորմ արտասուքով հարցուց կըսէին դեռատի կանայք և օրիորդներ...

Սիրտ պէտք է դիմանալու համար անմեղներու այդ սուգ ու շիւանին։

Հաֆըզ և կայմակամ երբէք ալ չեն աշխատիր Էմրագոմցոց մէջ գոնէ հարցաքննութիւն ընելու, վասնզի անոնք թիւրքեր են, անոնց պատրուակ մըն էր պէտք հայերը տանջելու, և այժմ այդ պատրուակը կայ. ալ ինչու պիտի ուշացնեն։

Ես արդէն անկարող եմ զինւորներու ըրած լրբութիւններուն մասին խօսիլ. սիրտ չմնաց. ամեն մի քար, ամեն մի անշունչ առարկայ անգամ բողոք է կարդած կառավարութեան պաշտօնեաներու և զօրքերու կատարած աւարառութիւններու, բռնութիւններու և սրիկայութիւններու դէմ, ուր մնաց թէ կենդանի մարդիկ, անոնք, որոնք իրենց կաշիին վրայ զգացեր են այդ ամենը։ Այսօր քեօփրի-քեօյցին մի աղօթք ունի միայն, և այդ աղօթքը այն է, որ մեծ պետութիւններու կորսուած խիղճը վերադառնայ իրենց մէջ... բայց այն ալ, ինչպէս կերևայ, յաւիտեան կորսուեր է, վերադառնալու ոչ մի յոյս չկայ։

Առաջնորդին բողոքները երևի մինդերի ալթը եղած են և երևի միայն այն ատեն մինդերին տակէն դուրս կուգան, երբ արդէն քեօփրի-քեօյցիք իրենց հոգին աւանդեն։

Տեղացի

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

25 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Երեկոյեան ժամը 6 ու 45 րոպէին Թագաւոր Կայսրը և Կայսրուհի Թագուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնան Գահաժառանգ Արքայազնի և Մեծ Իշխանուհիների հետ միասին Ցարսկոյէ-Սէլոյից մեկնեցին Ղրիմի հարաւային ափը։ Նորին Մեծութիւններին ուղեկցում են օբէր-հոֆմէյստէր կոմս Բենկէնդորֆ, ատագ-կապիտան Նիլով, օբէր-շտալմէյստէր Ֆօն-Գրինվալդ, պալատական կօմէնդանտ Վօէյկով, իշխան Օրլով, Նորին Մեծութեան գնդի հրամանատար Կոմարով և շքախմբի այլ անձինք։ Կայարանում Նորին Մեծութիւններին հրաժեշտ տուին մինիստրների խորհրդի նախագահը, ներքին գործերի մինիստրը, պալատի մինիստր կոմս Նիրոդ, գեն.-ադ. Մակսիմովիչ և այլ բարձրաստիճան անձինք։ Կայսերական գնացքի կոմենդանտն է պալատի ոստիկանապետ գնդապետ Հէրարդ։

Այսօր Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնան և Մեծ Իշխանուհիներ Մարիա Ալէքսանդրովնա դքսուհի Սաքսէն-Գոտսկայան, Քսենիա Ալէքսանդրովնան և Օլգա Ալէքսանդրովնան մեկնեցին Ցարսկոյէ-Սէլօ Նորին Մեծութիւնների մօտ։

Օդագնաց պորուչիկ Ալէխնովիչը թռիչք կատարեց Սիկորսկիի բիպլանով, անցնելով մօտ 500 վերստ տարածութիւն 4 ժամ 56 րոպ. 12 վայրկեանում։

Վերջին տուեալների հիման վրա, փետրվարի 28-ի մրրկի պատճառած վնասները Դոնի շրջանում հետևեալներն են. Րօստովի վիճակում վնասները 524,000 ր. է, զոհվել են 76 մարդ. Տագանրոգի վիճակում վնասներն են 149,000 ր., զոհվեցին 7 հոգի, անհետ կորան 13. Սալսի վիճակում վնասները՝ 600,000 ր., զոհեր չը կան։ Կուբանի շրջանում Ազովի ափին՝ սկսած Եյսկից մինչև Ախտոնիզօվսկայա ստանիցան՝ քարուքանդ են եղած շատ ձկնորսարաններ, խեղդվել են 349 մարդ 1347 կենդանի մնացածներից, խեղդվել են 974 գլուխ անասուն. վնասները 365,475 ր.։ Երկու շրջաններում վնասվածներին օգնելու համար կազմակերպված են շրջանային ու տեղական նպաստամատոյց յանձնաժողովներ։

ԹԵՕԴՈՍԻԱ.—Երեք օր շարունակվող փոթորիկը դադարեց։

ԲԱԹՈՒՄ.—Բազմաթիւ հասարակութեան աչքի առաջ օդագնաց Քէպուրօվը ընկաւ ծովը, բայց լուղորդները ազատեցին նրան։ Գործիքը ջրասոյզ եղաւ։

ՎԱՐՇԱՎԱ.—Առաջիկայ տօների առիթով աւագ-ոստիկանապետն արձակեց այն 53 ուսանողներին, որոնք կալանաւորվել էին մի ամսով գերմանական հիւպատոսարանի առաջ ցոյց անելու համար։

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Ամենուրեք տիրող գործազրկութեան պատճառով ունգարական կառավարութիւնը հարկադրված զգաց իրան կազմակերպել ամբողջ երկրում հասարակական աշխատանքներ։

Օպպօզիցիայի պատգամաւորների Պետերբուրգ այցելելը շարունակում է գրաւել ամբողջ մամուլի ուշադրութիւնը։ Կառավարական օրգանները գործը վատ հանաք են համարում։ «Բուդապեշտ» և «Պէստի-Հիրլապ» օպպօզիցիօն լրագիրները ճշդում են այդ տեղեկութիւնը, պնդելով որ անկախութեան կուսակցութեան պատգամաւորներից շատերը ուղեկցելու են ամառվայ վերջը կամ Կորօլիին դէպի Պետերբուրգ։

ՊՐԱԳԱ.—Բոլոր չեխական կուսակցութիւնների մասնակցութեամբ կայացաւ բողոքի մեծ միտինգ Ունգարիայի ազգութիւնների վերաբերութեամբ գործադրվող բռնութիւնների դէմ։ Միտինգը կազմակերպողների կողմից՝ Պրագայի քաղաքային խորհրդի անդամ Րօզնագլը յայտնեց, որ ուգրօրուսների շարժումը կրօնական էր, և ոչ թէ քաղաքական։ «Մենք, չը կարողանալով սառնասիրտ մնալ դէպի ուգրօրուսների հարցը,—ասաց Րօզնագլը,—բողոքում ենք նրանց դատելու դէմ, որովհետև այդ ճանապարհով չեն կարող վատթարացնել (?) մեր վերաբերմունքը դէպի Ռուսաստանը»։ Միտինգը բանաձև ընդունեց, որով բողոքվում է ունգարաբնակ սլաւօններին և ռումինններին հալածելու դէմ և պահանջվում է հիմնել Հաբսբուրգեան միապետութեան ֆեդերատիվ պետական կազմ։

ՀՌՈՄ.—Հասարակական աշխատանքների մինիստրը ընդունեց երկաթուղային ֆեդերացիայի կոմիտէտի ներկայացուցիչներին։ Մինիստրը համաձայնեց վերաքննել ընդունելութեան, բանւորների աշխատավարձը աւելացնելու, հանգստեան ու փոփոխման ժամանակի հարցերը։ Կառավարութիւնը պատ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ

XV*)

Ժառանգականութեան ուսումնասիրութիւնը լրացնում է հիւանդութիւնների ծագման և նրանց պատճառների պատմութիւնը։ Եթէ հիւանդութիւնների պատճառները մենք միշտ որոնում ենք մարմնակազմից դուրս, ապա պէտք է յիշենք նաև, որ զանազան ազդիչ փոփոխութիւններ անպայման կախված են ծնողներից ժառանգութիւն մնացած տրամադրութիւններից, ձգտումներից և դիմադրութեան ոյժից։ Պատահաբար առաջացած գործառնական փոփոխութիւնները փոխադրվում են սերունդներին և բազմապատկվում են յաճախ, անցնելով յետագայ սերունդների շարանների միջով։ Եւ նայած թէ այդ տեղի ունեցած փոփոխութիւնները բարենպաստ են թէ վնասակար, ընտանիքն էլ, կամ ցեղը, կամ թէ տեսակը կը լաւանայ, կամ ընդհակառակը կառաջանայ մի այլասերումն։

Երկար ժամանակից մի հաստատված սխալ ձևով սովորութիւն է դարձել ասել, թէ զանազան մարմնամասերի — սրտի, լեարդի, թոքերի, երիկամունքի, ջղային համակարգութեան— հիւանդութիւնները ժառանգական են։ Մինչդեռ ամենայաճախ ժառանգաբար փոխադրվում է գործառնական մի խանգարում, այն էլ մի հասարակ տրամադրութիւն, որը կարտայայտվի միայն մի միջանկեալ պատճառի ազդեցութեան շնորհիւ։ Սրտի, լեարդի, թոքերի, երիկամունքի հիւանդութիւններով բռնվածներից ծնունդ առած երեխաները, հարկաւ, ուրիշներից աւելի տրամադիր են լինում այդ հիւանդութիւններին։ Սակայն նրանք կը սպասեն մի առիթի, որպէսզի իրանց ժառանգած տրամադրութիւնը իսկական հիւանդութեան արտայայտեն. և դրա համար կը հարկաւորվի մի նոր ազդեցութիւն, մի թունաւորում կամ վարակում, ջղային մի անբնական ազդակ, որպէսզի ժառանգական հիւանդութեան տրամադիր մարմնամասը հարուածի տակ ընկնի։ Այս տեսակէտից շատ հաւանական է, որ շատ դէպքերում թոքախտի ակնյայտնի ժառանգականութիւնը իսկապէս պարտական է այն հանգամանքին, որ տուբերկուլօզաւորներից ծնունդ առած երեխաների թոքերը օժտված են մի անբաւարար գործառնութիւնով և բնականից աւելի նուազ շնչողական կարողութիւն ունեն։

Երբեք չը պէտք է շփոթել, խառնել ժառանգականութիւնը բնածնութեան հետ։ Այս վերջին բառի իմաստը վերաբերում է այն երևոյթին, երբ անհատն աշխարհ է գալիս իր հետ բերելով զանազան հիւանդոտ հակումներ, որոնց սկզբնապատճառը պէտք է փնտռել այն պատահական ոյժերի մէջ, որ ուղղակի կամ անուղղակի գործել են իրանց ազդեցութիւնը յղացման, կամ սերմնաւորութեան րոպէին։

Այսպէս ուրեմն բնածնութիւնը սաղմի ախտաբանութեան եզրափակումն է, իսկ ժառանգականութիւնը տեսակի կամ ցեղի ախտաբանութեան միայն մի գլուխը։

Բնածնութիւնը պէտք է համարել հետևանք այն արտաքին պատճառների, որոնք տպաւորութիւն են գործել սաղմի վրա, թափանցելով նրան ամփոփող թաղանթները. ամենից առաջ նա արգասիք է զանազան թունաւորիչ կամ վարակիչ ազդակների, որոնք թափանցում են տածինը. երբեմն էլ նա կախված է լինում ծնողների մարմնական կամ հոգեկան խանգարումներից։ Մի քաջակազմ անհատ, եթէ ապագայ երեխայի սերելու լինի իր մի հիւանդութեան ապաքինման ժամանակ, մի կին, եթէ իր յղութեան ընթացքում ենթարկվի բարոյական տխուր և ընկճող ազդեցութիւնների, անկասկած ծնունդ կը տան մի արարածի, որ կը ներկայացնէ մի առանձին ինքնայատուկ բնածնութիւն, այն է՝ նա կունենայ սնունդի խանգարումներ, կամ այլասերման նշաններ. նա ենթակայ կը լինի պէս-պէս տեսակի ջլախտի և շատ հեշտութեամբ կենթարկվի զանազան վարակումների։ Դժուար չէ հասկանալ, որ այս դէպքում հիւանդոտ ազդեցութիւնը տեղի է ունեցել մատղաշ, քնքոյշ խորշիկների վրա, ապա ուրեմն և հիւանդոտ այդ դրոշմն անջնջելի կը մնայ։ Ի՞նչ զարմանք, որ խանգարումը երեխայի մէջ միայն կերպարանք կը ստանայ, մինչդեռ նրան սերող ծնողների մէջ նա անցողական էր։

Բնածնութիւնը յաճախ հետևանք է թեթև և աննշմարելի երեւցող պատճառների։ Եւ եթէ ժառանգականութեան ուժեղ օրէնքներն երբեմն, կարծես, վրիպում լինեն, դրա պատճառը նրանումն է, որ մենք միշտ չենք կարողանում ճշգրտապէս գտնել այն պայմանները, որոնք փոփոխում են նրա ազդեցութիւնը։

Թէ գործարանական (օրգանական) և թէ ջղային խանգարումների տեսակէտից միշտ հակամէտութիւնն է, որ փոխադրվում է։ Ապա ուրեմն ըմբռնելի պէտք է լինի նախազգուշական միջոցների, նաև դաստիարակութեան մեծ և ազդու նշանակութիւնը։

Շատ յաճախ դաստիարակութիւնը սաստկացնում է ժառանգական պակասութիւնները։ Ջլախտաւորների կամ գինեմոլների երեխաներն իրանց ընտանիքի մէջ գտնում են օրինակներ կամ գայթակղութիւններ, որոնք և վերջ ի վերջոյ նրանց կորստեան պատճառը պիտի դառնան։ Իսկ եթէ ընդհակառակը նրանք հէնց իրանց մանկութիւնից կը դրվեն լաւ դաստիարակող անձանց մօտ, ապա ուրեմն նրանց ստացած ժառանգութեան վատ հետևանքները կարող են միանգամայն անհետանալ։ Դժբաղդաբար շատ սակաւ է տեղի ունենում դաստիարակութեան այսպիսի նպատակայարմար միջամտութիւն։ Ահա թէ ինչու մենք աւելի յաճախ տեսնում ենք, թէ ինչպէս ծնողների խանգարումները աճելով աճում և զարգանում են իրանց սերունդների մէջ։

Այսպէս էլ ծնվում և կազմվում են ախտաւորների ամբողջ ընտանիքներ։

Իսկ եթէ սրա վրա աւելացնելու լինենք, որ միևնոյն պակասութիւնները յաճախ գտնվում են և միևնոյն դասակարգերի մէջ, ապա ուրեմն հասկանալի պիտի լինի, որ նոյնանման հակումներ և հիւանդոտ պակասութիւններ ունեցող անհատների միաւորութիւնը էլ առաւել պիտի սաստկացնէ—և իրօք սաստկացնում է—ժառանգական խանգարումները։

Միւս կողմից էլ շատ յաճախ սօցիալական ընտրութեան շնորհիւ է լինում, որ թոյլերն և այլասերվածները կարողանում են ապրել. սակայն բարեբաղդաբար այս երևոյթը միայն անցողական է լինում և ոչ երկարատև, որովհետև շնորհիւ բնական ընտրութեան խիստ և անշեղ օրէնքների թուլակազմ և այլասերված ծնունդները վերջ ի վերջոյ մարում են և անհետանում կամ իրանց ամլութեան, կամ աւելի և աւելի զարգացող իրանց ուժասպառութեան շնորհիւ։

Եւ այսպէս՝ մենք նորից՝ ուզենք չուզենք գալիս ենք հպատակվելու բնութեան ուժեղ օրէնքներին, որոնցով կառավարվում է և անդարձ առաջ է ընթանում տիեզերքիս ընդհանուր զարգացման գործը. ուստի և մենք ստիպված ենք նայելու սօցիալական ընտրութեան վրա՝ ինչպէս բնական ընտրութեան մի մասի։ Չէ որ հէնց ինքը ընկերաբանութիւնը (սօցիօլօգիան) կենսաբանութեան (բիօլօգիայի) միայն և միայն մի մասն է։

Ժառանգականութիւնը բացատրում է ցեղերի, ազգերի զարգացումը, նրանց զանազան կերպարանքը թէ զանազան դարերում, թէ զանազան երկիրներում, և դրանով էլ հաշիւ է տալիս ախտաբանութեան բազմազան փոփոխութիւնների մասին։

Հիւանդութիւններն իրար չեն նմանվում տիեզերքիս ամեն մասերում. նրանք տարբերվում են նաև զանազան դարաշրջաններում։ Տիեզերական ազդակներ, կենդանի արարածներ, եւ առաւել մարդկային ցեղի անընդհատ փոփոխութիւններն են, որ առաջացրել են ախտաբանութեան փոփոխութիւնները ժամանակի ընթացքում և տարածութեան մէջ։ Ահա թէ ինչու մեր այսօրվայ հիւանդութիւնները տարբերվում են մեր նախնիների ունեցած և տեսած հիւանդութիւններից. ահա թէ ինչու մեր հիւանդութիւնները անպատճառ կը տարբերվեն մեր յետագայ սերունդների հիւանդութիւններից։

Եթէ մենք կարողանայինք գտնել բոլոր այն բազմազան պայմանները, որոնք մարդուս վրա ազդել են թէ նրա ծնունդից առաջ և թէ յետոյ եթէ մենք կարողանայինք ամեն մի առանձին դէպքում ձեռք բերել ճշգրիտ տեղեկութիւններ ժառանգականութեան և բնածնութեան մասին. եթէ մենք ամեն անգամ կարողանայինք գտնել միջամտող արտաքին պատճառները, ապա մենք կը կարողանայինք ճշտութեամբ գուշակել մարդկանց ապագան և առաջուց կազմել նրանց բնախօսական, ախտաբանական կամ բարոյական կենսագրական պատմութիւնը։ Անշուշտ ակներև է, որ մեր կենսական բոլոր գործողութիւնները, լինելով արտաքին ազդակների միայն հակազդումներ, պէտք է որ իրար հետ շաղկապված լինեն նոյնքան և նոյնպէս կանոնաւոր կերպով, ինչպէս և միւս տիեզերական երևոյթները։ Միայն թէ անհնար է որոշել բոլոր միջամտող անհամար պատճառները։ Շատ յաճախ մեզ համար գաղտնիքի թանձր քօղով ծածկված են մնում այն բազմաթիւ ազդեցութիւնները, որոնց սակայն մենք այսպէս թէ այնպէս ենթարկված ենք լինում։

Այնու ամենայնիւ ոչ մի կասկած չը կայ, որ գիտութիւնը գաղտնիքից այս քօղն էլ կը բարձրացնէ և ժառանգականութեան բոլոր թէ նպաստաւոր, թէ վնասաբեր ազդեցութիւնները մեզ համար հասկանալի կը դարձնէ։

Գիտութիւնը ամենայն պատրաստականութեամբ իր անելիքն անում է, իր պարտքը կատարում է։

Մարդկութիւնը միշտ մնում է պարտական դէպի իր յետագայ սերունդները և միշտ մոռանում է, որ վատ, փտած արմատներ ունեցող ծառից երբէք չէ կարելի ստանալ գեղեցիկ և անուշ պտուղ, որն իրա մէջ պարունակէ ապագայ պտղատու ծառի առողջ սերմն ու կորիզը։ Այդպիսի ծառը իր չորացած պտուղներով փտութեան է մատնվում, պարտազանց մարդկութիւնը այլասերման և անհետանալու է լինում դատապարտված։

Փրկութիւնը պէտք է փնտռել պարտաճանաչութեան, առողջապահութեան և դաստիարակութեան մէջ։

Այս հարցերի մասին խօսելու եմ մօտ ապագայում։

Բժ. Արտաշէս Շխեան.

---

*) Տես «Մշակ» № 61։

բատ է աւելացնել աշխատավարձը, յատկացնելով ամեն տարի 15 միլիոն, և ձեռնարկել յետագայ բարելաւումների հարցի քննութեան։ Ֆեդերացիայի ներկայացուցիչները այսօր գիշեր վերջնական վճիռ կը կայացնեն։

ՎԻԷՆՆԱ.—Պետերբուրգ մեկնեց աւստրօ-ունգարական դեսպան կոմս Սապարին։

ՊԷԿԻՆ.—Պաշտօնապէս հաղորդվում է «սպիտակ գայլերի» պարտութեան մասին Սիանֆուի մօտ։ Սպասվում է նոր ճակատամարտ։

ՏՕԿԻՕ.—Լուրերի համաձայն, կայսրը չէ ընդունել Կիօուրի մերժումը կաբինէտ կազմելու։

Ծովակալ Տօգօն պալատի յանձնարարութեամբ այցելեց Կատօյին և աշխատեց համոզել նրան ընդունել ծովային մինիստրի պորտֆէօյլը։

ԲԱՏԱՎԻԱ.—Ձերբակալվեց այն անձը, որ ճանապարհին սպանել էր չին գանձապահին, որ տեղս էր բերում 11,000 դոլլար։

ՍՏՕԿՀՕԼՄ. — Հրատարակվեց բիւլէտէն թագաւորի առողջութեան մասին։ Բժիշկները գտան, որ թագաւորի ստամոքսում կայ հասարակ խոց։ Բժիշկների կարծիքով՝ բուժելու լաւագոյն միջոցը անդամահատութիւնն է։ Թագաւորը համաձայնեց ենթարկվել անդամահատութեան ըստ հնարաւորութեան շուտով։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ.—Համալսարանը ձեռնարկել է քննելու այն հարցը, թէ հնարաւո՞ր է, արդեօք, համալսարան ընդունել առևտրական դպրոցները աւարտողներին թէ ոչ։

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 մարտի

ԴՈՒՐԱՑՑՕ.—Երէկ և այսօր կայացան միջազգային վերահսկիչ յանձնաժողովի խորհրդակցութիւնները Եպիրոսի դէպքերի առիթով։

Կորիցայից հաղորդում են, որ Նիշա գիւղի մօտ 300 ապստամբներ պարտութիւն են կրել։ Գերվել են 5 յոյն զինւոր։

ՎԻԷՆՆԱ.—«Նէյէ-Ֆրէյէ-Պրեսսէին» տեղեկացնում են Դուրացցօյից. «Կորիցայի ապստամբված բնակիչները լիակատար հպատակութիւն յայտնեցին ալբան իշխանութիւններին։ Կորիցայի միտրօպօլիտը, որ համարվում է ապստամբութեան յանցաւոր, ձերբակալված է»։

ԲԵՐԼԻՆ.—Ստոյգ աղբիւրից տեղեկացնում են, որ մեծ պետութիւնները ոչ խմբովին, ոչ էլ առանձին-առանձին մտադիր չեն հանդէս գալ Եպիրոսի հարցի առիթով։ Երրեակ համաձայնութեան պետութիւնները արտայայտել են իրանց հայեացքը հարցի նկատմամբ մի յատուկ նօտայի վերջնական խմբագրութեան մէջ, որի մասին իրազեկ են արել երրեակ դաշնակցութեան պետութիւններին։ Սպասվում է, որ մեծ պետութիւնների երկու խմբակի միջև կը կայանայ համաձայնութիւն։

ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 մարտի

ԼՕՆԴՕՆ.—«Իվէնինգ-Նիւսին» հաղորդում են, որ Ուլստէրի կամաւոր զինւորներին յատկացված զէնքն ու 24 գնդակացիրների մասերը բեռնվել են գաղտնի հիւսիս-իռլանդական ծովափի երկու տեղում և ուղարկվել են Ուլստէրի զինւորների գլխաւոր բանակատեղը։

Գրէյը մեկնեց իր մասնաւոր գործերով գաւառ։ Նրա պարտականութիւնները կատարում է լորդ Մօրլէյը։ Կառավարական շրջաններում հերքվում են այն լուրերը, թէ Գրէյը տարաձայնել է կաբինէտի հետ։

Համայնքների պալատ։ Իռլանդական հօմրուլի օրինագծի երկրորդ ընթերցման ժամանակ ծագած վիճաբանութիւնները ընթացան առանց միջադէպերի։ Օպպօզիցիայի հռետորները շարունակում են պնդել Ուլստէրի չէզոքացման վրա ընդհանուր ընտրութիւնների ժամանակ։ Կարսօնը խորհուրդ է տալիս կառավարութեանը թողնել ույժի քաղաքականութիւնը, որը կարող է կործանել Ուլստէրը և Իռլանդիան և գուցէ թէ Անգլիային։ Րէդմօնդը յայտնում է, որ նացիօնալիստները համաձայն են հարցի փէդէրալ շարժման, եթէ Իռլանդիան ներկայացվի իբրև ամբողջական մեծութիւն, չը բաժանված Ուլստէրի և միացած Իռլանդիայի։ Եթէ բիլլը մնայ իր ույժի մէջ, եթէ Ուլստէրը հանվի 6 տարով, այն դէպքում Րէդմօնդը չէ հաւատում, թէ քաղաքացիական կռիւ ծագէ Ուլստէրում, և կարծում է, որ եթէ բիլլը ստանայ օրէնքի ույժ, այն ժամանակ դրութիւնը կը փոխվի։ Բօնար Լօուն պատրաստ է ընդունել կառավարութեան հետ նոր բանակցութիւնները սկսելու առաջարկութիւնը։ Երկրորդ ընթերցումը ընդունվեց 386 ձայնով ընդդէմ 276-ի։

«Ալբակօր» զրահանաւի վրա խողովակի պայթումից սպանվեցին երեք բանւոր։

ՆՈՐՖՕԼԿ.—«Սիվիլիա» ականանաւի վրա կաթսայի պայթումից սպանվեց մի բանւոր, երկուսը վիրաւորվեցին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՆԱՑՔԻ ԽՈՐՏԱԿՈՒՄԸ

Մարտի 22-ին, ցերեկվայ ժամը $12^{1}/_{2}$-ին, ապրանքատար № 128 գնացքը, Ախտալա կայարանից դուրս գալով, այնպէս է արագացնում իր ընթացքը, որ չէ կանգնում նոյնիսկ Այրում կայարանի փակ սեմաֆորի առաջ. թռչում է սեմաֆորի մօտով և դիպչում երկու բեռնած վագոնի, որոնք նրա դիպչելուց ընկնում են իրանցից քիչ հեռու կանգնած՝ վարժութիւններ կատարող գնացքի և նրան կցված վագոնների վրա։ Տեղի է ունենում վագոնների ընդհարում, որի ժամանակ երեք բեռնաւորված վագոն փշուր-փշուր է լինում։ Այդ ապրանքատար գնացքով Ալլահվերդի գործարանից գնալիս են լինում Բօրչալուի գաւառապետ Գաւրիլով, նրա օգնական Ինալիշվիլի, պահակախմբի օֆիցէր Վեսելօվսկի և Լօռու շրջանի պրիստաւ Ստեփանեան. սրանք, տեսնելով անխուսափելի վտանգը, թռչում են գնացքից, որի միջոցին պրիստաւի ձեռքերը դուրս են ընկնում, գաւառապետի օգնականի աջ ոտքի ազդրը ճզմվում է, իսկ Գաւրիլով և Վեսելօվսկի թեթև վէրքեր են ստանում և վախենում սաստիկ։ Բանից դուրս է գալիս, որ գնացքը տեղ է հասել վաղաժամ, այնպէս որ կայարանը պատրաստ չէ եղել նրան ընդունելու։

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Նորին Օծութեան Տէր-Վեհափառ
Գէորգ V Կաթողիկոսին ազգիս
Աստրախանի հայ հասարակութիւնից
Ամենախոնարհ զեկուցումն *)

Մենք, Աստրախանի հայերս, վերջին օրերս զարմացմամբ լսեցինք, որ մեր հոգևոր բարձր շրջաններում հարց է դրված՝ թեմ. դպրոցը, Աստրախանից դուրս, մի այլ վայրում բացելու մասին։ Անմիջապէս կարիք զգացինք իրողութիւնը առ տեղեաւ ստուգելու։ Հասարակական հիմնարկութիւններում պաշտօնավարող մի խումբ անձեր դիմեցին ներկայ սրբազան առաջնորդ Մխիթար եպ.-ին, որի հետ ունեցած խօսակցութիւնից պարզվեց, որ այդ առիթով դեռ անցեալ 1913 թ. ապրիլ ամսից գրագրութիւն կայ Ներքին գործերի մինիստրութեան, Էջմիածնի և իր մէջ և որ Ներքին գործերի մինիստրութիւնից Էջմիածնում թուղթ է ստացված, որով հարց է արված թէ՝ հոգևոր իշխանութիւնը ո՞րտեղ է յարմար գտնում բացել Աստրախանի թեմական դպրոցը։ Նաև պարզվեց, որ այս հարցի առիթով Էջմիածնից գրված է թեմակալ Մխիթար եպ.-ին՝ իմանալու նրա կարծիքը դպրոցի տեղի մասին, որն և անցեալ տարվայ յունիս ամսին պատասխանել է թէ՝ իր կարծիքով յարմարագոյն վայրը դպրոցի համար Արմավիր աւանն է։

Քանի որ Աստրախանի դպրոցի հարցը մի օրվայ ծնունդ չէ, այլև տասնեակ տարիների անցեալ ունի, ուստի և անհրաժեշտ ենք համարում այստեղ առաջ բերել մի քանի պատմական և վիճակագրական տեղեկութիւններ, հարցը աւելի պարզած լինելու։

Աստրախանի թեմ. դպրոցի հարցը մեր նախկին երեք վիճակաւոր առաջնորդների հոգսի, զբաղմունքի և բազմածալ գրագրութիւնների առարկայ է եղել։ Այս գործին սկիզբն է դնում ժամանակի թեմական առաջնորդ Գէորգ Սուրէնեանը (ազգիս ներկայ Վեհ. Հայրապետը) 1887 թ. օգոստոսի 6-ի № 93-ում յայտարարութեամբ՝ յանուն ժամանակի Վեհ. Կաթողիկոսի։ Այդ յայտարարութիւնից երևում է, որ սրբ. առաջնորդը խնդրում է՝ Կաթողիկոսի դիւանատանը գտնվող Աստրախանի թեմ. դպրոցի առիթով կազմված գործը ուղարկել իրան, դպրոցի բացման հարցին ընթացք տալու համար։ Կաթողիկոսական դիւանատանը 1887 թ. դեկտ. 18-ի № 617 գրութեամբ պատասխանում է յիշեալ գրութեանը, թէ դիւանատանը այդպիսի գործ չի երևում, և սրբ. առաջնորդ Սուրէնեանին ուղարկվում է բոլոր թեմ. դպրոցների համար կազմած կանոնադրութեան պատճէնը։

Ապա 1888 թ. նոյեմբ. 5-ի և 1889 թ. յունվ. 27-ի շրջաբերական գրութիւններով նոյն առաջնորդ տէր Գ. եպ. Սուրէնեանը հարցնում է ամբողջ թեմին՝ ինչ չափով կարող են դրամական նպաստ տալ Աստրախանի թեմ. դպրոցի պահպանութեան համար, և երբ պատասխանների թւում Ղզլարի հոգ. կառավարութիւնը 1889 թ. փետրվ. 15-ի յայտարարութեամբ ուղարկում է ղզլարցիների արձանագրութիւնը և շեշտում է, թէ ծխականք հարցնում են՝ ինչո՞ւ սրբ. առաջնորդը իր գրութեան մէջ չի յիշում, թէ ո՞րտեղ է բացվելու դպրոցը, սրբ. առաջնորդ Գ. Սուրէնեանը բարեհաճում է յայտարարութեան այդ տողերը ընդգծել և լուսանցքում մակագրում է. «Թեմ. դպրոց վերապահեալ է առաջնորդական քաղաքին, վասն որոյ աւելորդ հարց ի կողմանէ ղզլարցւոց»։ Նոյն առաջնորդը 1889 թ. յունիսի 25-ին Աստրախանում ծխ. ժողով է նշանակում, ընտրելու մի յանձնաժողով թեմ. դպրոցի բացման մասին աշխատելու։ Յանձնաժողովը ընտրվում է և սկսում իր գրագրութիւնները։ Դրան է յանձնվում նաև Էջմիածնից ստացված դպրոցական կանոնադրութիւնը։

Հետևեալ վիճակաւորը՝ Աստրախանի թեմի կառավարիչ Խորէն եպ. Ստեփանէն՝ 1895 թ. մայիսի 6-ի շրջաբերականով Աստրախան քաղաք է հրաւիրում պատգամաւորներ ամբողջ թեմի կողմից, որոնք պիտի ներկայ լինեն մայիսի 26-ին կայանալիք պատգ. ժողովում, որոշելու թեմ. դպրոցի տեղը։ Այդ պատգ. ժողովների երեք արձանագրութիւնները (մայիսի 26, 27, 28) ցոյց են տալիս, թէ որքան բազմակողմանի քննութեան են առնվել դպրոցի բացման և պահպանման հարցերը և ապա քուէարկութեան վերջնական արդիւնքը եղել է թեմ. դպրոցի տեղի որոշումը, որ և գերակշռող է հանդիսացել Աստրախան քաղաքը։

Ապա նոյն աշնանը Աստրախանի թեմի նոր նշանակված առաջնորդ Արիստակէս արքեպ. Սեդրակեանը Վեհ. Կաթողիկոսից ստացած լիազօրութեամբ ձեռնամուխ է լինում Աստրախան քաղաքում թեմ. դպրոցի շինութեան գործին և 1895 թ. դեկտ. 24-ին իր մօտ հրաւիրում է Աստրախանի ծխականների առաջին ժողովը շինութեան առիթով և հէնց այդտեղ սկսում է կամաւոր նուիրատւութիւններ դրամով և նիւթեղէնով, ուր աստրախանցիները ստորագրում են մօտ 16,000 ռ.։ Հետևեալ տարվայ գարնանից սկսվում է շինութեան գործը յատուկ ընտրված շինարար յանձնաժողովի ձեռքով։ 1897 թ. նոյեմ. 10-ից նոյն առաջնորդը Վեհ. Կաթողիկոսին ուղղած իր թղթում յայտնում է, որ 1898 թ. սեպտ. թեմ. դպրոցի բացման համար պատրաստ ունենալով հարկաւոր թւով սենեակներ մտադրութիւն ունի բանալ թեմ. դպրոցը, ուստի և խնդրում է հաստատել տալ, ուր հարկաւորն է, վերջինիս կանոնադրութիւնը։ Ապա 1898 թ. յունվ. 30-ին ստացվում է հոգևոր գործերի դեպարտամենտի դիրեկտորի № 6208 գրութիւնը, որով աւելորդ համարելով Աստրախանի թեմին առանձին թեմ. դպրոց ունենալը՝ մերժում է թոյլտւութիւնը։

Այնուհետև Արիստակէս սրբազանի անխոնջ ջանքերով և աշխատութեամբ և Աստրախանի հայութեան սիրալիր վերաբերմունքով դէպի թեմ. դպրոցի անհրաժեշտ, կարևոր և մեծ գործը, վերջապէս 1906 թ. յունիսի 1-ին ստացվում է Ներքին գործերի մինիստր և մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինի № 2838 գրութիւնը Աստրախանի նահանգապետ Գրօմբչևսկիի № 4624 թղթի հետ, որով թոյլատրվում է (XI հատոր, 1208 յօդ.) թեմ. դպրոցի բացումը Աստրախան քաղաքում, միայն որոշ պայմաններով, որոնց համաձայն կազմած կանոնադրութիւնը պահանջվում է ի հաստատութիւն։ Մինչև յիշեալ կանոնադրութեան հաստատութիւնը, որից յետոյ միայն պէտք է հրաւիրվէր թեմ. պատգ. ժողով, ընտրելու թեմ. դպրոցի համար հոգաբարձական կազմ, սրբ. Սեդրակեանի կարգադրութեամբ դեռ հրաւիրվում է ծխ. ժողով Աստրախանում, որը ընտրում է ժամանակաւոր կառավարիչ յանձնաժողով, թեմ. դպրոցի առաջին երկու նախակրթարանները բացելու։ Յանձնաժողովը ընտրվում է, նախահաշիւը կազմվում, հաստատվում և 1906 թ. սեպտ. 8-ին կատարվում է Աստրախանի թեմական դպրոցի հանդիսաւոր բացումը, որի նորաբաց երկու նախակրթարանները հէնց սկզբից ունենում են զուտ Աստրախանում բնակվող 75 աշակերտ (Ա. պատրաստականում 40 աշակերտ, Բ.-ում 35)։ Ապա թեմական դպրոցը կառավարող յանձնաժողովի 1907 թ. մարտի 14-ի արձանագրութիւնից երևում է, որ նոյն ամսին Աստրախանի կոնսիստորիան № 296 գրութեամբ յայտնում է, թէ Էջմիածնի սինօդը պատուիրում է կազմել թեմ. դպրոցի ուսումնակ. և դրամակ. տեղեկագիրը և ուղարկել սինօդ։ 1907 թ. մայիսի 11-ին դպրոցի կառավարիչ յանձնաժողովը՝ ի նկատի ունենալով ուսումն. տարվայ վերջանալը և Բ. պատրաստականցիների յաջորդ դասարան փոխադրվելը՝ օր առաջ կազմում է Գ. պատրաստականի նախահաշիւը 5005 ռ. և առաջարկում ի հաստատութիւն։ Սրանից առաջ ուղարկված էր նաև Աստրախանի թեմ. դպրոցի կանոնադրութիւնը Վեհ. Կաթողիկոսին՝ Ներք. գործ. մինիստրութեանը ներկայացնելու ի հաստատութիւն, սակայն Խրիմեան Հայրիկը կանոնադրութիւնը դեռ Պետերբուրգ չուղարկած՝ կնքում է իր մահկանացուն, և հայրապետական գահը մնում է թափուր։ 1908 թ. յունվ. 10-ին № 75 գրութեամբ Աստրախանի կոնսիստորիան յայտնում է թեմ. դպրոցի կառավարող յանձնաժողովին, որ հայրապետական աթոռի տէր տեղակալը (ներկայիս Վեհ. Հայրապետը) դժուարացել է միջնորդութիւն յարուցանել Ներք. գործ. մինիստրութեան առաջ կանոնադրութեան հաստատութեան առիթով, այս հարցը նոր ընտրելի Կաթողիկոսի իրաւասութեանը վերապահելով։ Ապա կառավարիչ յանձնաժողովը սինօդին է խնդրում՝ միջնորդութիւն յարուցանել, առարկելով որ Գ. պատրաստականը չը բացվելու դէպքում՝ դժուար կը լինի դրամ ձեռք բերել, եղած աշակերտներն էլ կը ցրվեն, ուստի և խնդրել է սինօդից՝ վերցնել հայրապետական դիւանից Գ. պատրաստականի կանոնադրութիւնը և ներկայացնել Ներք. գործ. մինիստրին։ 1908 թ. յունիսի 26-ից № 3880 գրութեամբ օտար դաւանութեանց դեպարտամենտը, յանուն Աստր. թեմ. իշխանութեան, յայտնում է, որ սինօդի խնդիրը՝ Աստրախ. թեմ. դպրոցի Գ. պատրաստականի բացման թոյլտւութեան մասին՝ թողել է անհետևանք։ 1908 թ. Աստրախանի կոնսիստորիան № 1378 գրութեամբ յայտնում է դպրոցի կառավարիչ յանձնաժողովին, որ Էջմիածնի սինօդը պահանջում է՝ թեմ. դպրոցի ուսուցչական կազմի ռոճիկներից հանել օրէնքով սահմանված կօպէկագրամները թեմիս որբ և այրիների գանձարանի օգտին։

Բացի այդ՝ Աստրախանի հայ հասարակութիւնը օրիորդական դպրոցի առիթով Էջմիածին ուղարկած իր պատգամաւոր պ. Ղ. Մամաջանեանին յանձնարարում է աշխատել՝ թեմ. դպրոցի կանոնադրութիւնը հաստատութեան ներկայացնելու առիթով։ Գ. պատրաստականի բացման մերժումից յետ՝ Աստրախանի հայ հասարակութիւնը 1908 թ. Էջմիածին է ուղարկում երկու պատգամաւոր՝ պ. պ. երդ.-հաւատ. Կ. Ալաձալեանին և ուսուցիչ Կ. Սօրուլեանին՝ դպրոցի կանոնադրութեան հաստատութեան և հետևեալ դասարանների բացման թոյլտւութեան առիթով աշխատելու, սակայն հայրապետական աթոռի թափուր լինելը պատճառ է եղել գործը ձգձգվելու։ Ապա երբ նորընտիր Հայրապետ Տ. Տ. Մատթէոս Բ. կաթողիկոսը Պետերբուրգից ուղևորվում էր Մայր-Աթոռը Աստրախանի թեմի սահմանով, Պետրօվսկից անցնելու ժամանակ, Նորին Սրբութեան ընտրութիւնը և հաստատութիւնը շնորհաւորելու համար Աստրախանի հայ հասարակութիւնը Պետրօվսկ ուղարկեց երկու պատգամաւոր՝ արժ. Գէորգ ք. Մկրտումեանին և երդ.-հաւ. պ. Ռուբէն Աստուածատրեանին, որոնց և յանձնարարվեց՝ առանձին գրաւոր դիմումով հրաւիրել նորընտիր Հայրապետի ուշադրութիւնը Աստրախ. թեմ. դպրոցի տարտամ դրութեան վրա և խնդրել՝ օր առաջ աշխատել դպրոցի կանոնադրութեան հաստատութիւնը ձեռք բերելու։ Այլև թեմ. կոնսիստորիան ընդունելով դպրոցի երկու պատրաստականների գոյութիւնը, 1906 թ. սկսած՝ ամեն տարի Աստրախանի ծխ. ժողովին ստուգել է տալիս դպրոցի դրամական հաշիւները։

(Վերջը միւս անգամ)

---

*) Ներկայ զեկուցումը Վեհ. Կաթողիկոսին անձամբ ներկայացրել է Աստրախանի պատգամաւոր Ռ. Աստուածատրեանը Էջմիածնում.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Գնդապետ Պլէխանօվը դասախօսութիւնը աւարտելուց յետոյ, գիշերվայ ժամը 12-ին մեկնեց Կարս՝ այնտեղ ևս դասախօսելու։ Նա դասախօսելու է նաև Ալէքսանդրօպօլում, այնտեղից գնալու է Բաքու, ուր դասախօսելու է մարտի 30-ին։

◆ Սինօդի անդամ Մատթէոս եպիսկոպոսը երէկ ուղևորվեց Մարց գիւղը՝ քննելու համար, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով, Մարց և Լօռուտ գիւղերի գիւղացիների գանգատները Ռոստոմ Թումանեանի դէմ։ Լաւ կը լինէր, եթէ քննութեան արդիւնքը յետոյ սինօդը հրատարակէր ի լուր ընդհանրութեան։

◆ Մենք նորից ստացանք Լօռուտ գիւղի գիւղացիների ստորագրութեամբ մի բողոքագիր՝ Ռոստոմ և Վահան Թումանեանների դէմ։ Վերջինս, ինչպէս գրում են գիւղացիները, ստիպում է իրանց ստորագրել թղթեր, թէ գիւղացիների բողոքը, տպված «Մշակի № 52-ի մէջ, սուտ է։ Գիւղացիները խնդրում են մեզ միջամտել։ Մենք ոչ մի հնարաւորութիւն չունենք այդ անելու։ Կարող ենք միայն տպել նամակը։

◆ Թիֆլիսի շերամապահական կայարանի կողմից՝ շերամապահ և մեղւաբոյծ ինստրուկտորներ են նշանակվել հետևեալ անձինք հետևեալ շրջաններն և նահանգները շրջելու ներկայ գարնան և ամառվայ ընթացքում. Գ. Գ. Սունդուկեան՝ կառավարիչ տեղական շերամապահական ճիւղի, որը միևնոյն ժամանակ շրջելու է Երևանի նահանգը և Կարսի շրջանը, որպէս գլխաւոր շերամապահ։ Ա. Ս. Ժուկօվսկի շրջելու է Ստավրօպօլի, Թիֆլիսի նահանգները և Կուբանի շրջանը. Ի. Գ. Քութաթելաձէ՝ Քութայիսի նահանգը, Բաթումի, Սուխումի շրջանները և Սև ծովի ափերը մինչև Տուապսէ։ Սրանք ունեն և օգնականներ։ Շերամապահներ են նշանակված և Արէշի ու Նուխու գաւառներում։

◆ Քութայիսի նահանգապետը թոյլատրել է Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկ. Ամաղլէբա գիւղում (Օզուրգէթի գաւ.) ձրի գրադարան-ընթերցարան բանալ գիւղացիների համար։

◆ Կիրակի, ամսիս 23-ին, Կուկիայի հայոց ծխական դպրոցում, ղեկավարութեամբ աւագ-ուսուցիչ Պետր. Յովհաննիսեանի, կայացաւ ծնողական ժողով։ Ներկայ էին դպրոցի հոգաբարձուները, ուսուցիչ-ուսուցչուհիները և 90—100-ի չափ ծնողներ։ Յովհաննիսեանը խօսեց ընտանեկան դաստիարակութեան և նրա կատարելիք դերի մասին դպրոցի և նրա պահանջների հանդէպ։ Մէջ ընդ մէջ, տրված հարցերի մասին, հետաքրքրութեամբ արտայայտվում էին ծնողներից շատերը։ Խօսվեց և դէպի Էջմիածին ու Անի կազմակերպվելիք աշակերտական էքսկուրսիայի շուրջը։ Ծնողները ցոյց տուին իրանց աջակցութիւնը այդ խնդրում և ընտրեցին ծնողական խորհուրդ։ Երկու ժամ տևող խորհրդակցութիւնը անցաւ հետաքրքրական, և ծնողները ցրվեցին գոհ սրտով։

◆ Երէկ, ամսիս 26-ին, արհեստաւորաց դպրոցի 25 աշակերտներ, ուսուցիչների հետ միասին, էքսկուրսիայով ուղևորվեցին Տկվիբուլի (Քութայիսի նահանգ) ածխահանքերը դիտելու։ Այնտեղից նրանք գնալու են Բօրժոմ և 3 օրից յետոյ վերադառնալու են Թիֆլիս։

◆ Վրաց Գիւղատնտեսական Ընկերութեան նախաձեռնութեամբ Թիֆլիսի նահ. Մարտգօբի գիւղում կայանալու է գիւղատնտեսական խորհրդակցութիւն։

◆ Ստացանք տ. Ջանազան Մելիք-Փաշայեանից 5 ռուբլի՝ «Մշակի» երէկվայ համարի (№ 65) մէջ յիշված շուշեցի աղքատ ընտանիքի օգտին։ Նոյն նպատակով ստացել ենք նաև Սամուէլ Մկրտչեանից 1 ռուբ.։ Ընդամենը ստացած ունենք 6 ռուբ.։

◆ Ստացանք Սկօբելևից, Ովսաննա Միքայէլեանից 5 ր. զատկական տօներին բաժանելու համար։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Պետերբուրգում պատգամաւոր Բալաշօվի նախագահութեամբ կայացաւ նացիօնալիստների ժողովը, որ քննեց «Кіевлянинъ»-ի խմբագիր Շուլգինի վարմունքը Բէյլիսի գործի առիթով։ Ժողովը ընդունեց, որ սպանութեան րիտուալ բնաւորութիւնը անհերքելի է, բայց Շուլգինը ժխտելով այդ՝ միամտաբար մոլորվում է։ Ցաւելով տարաձայնութեան համար, ֆրակցիան, սակայն, դէպի Շուլգինը յարգանք է պահում յանուն նրա անցեալ գործունէութեան։ Շուլգինը այդ որոշմանը սուր վերաբերվեց և վճռել է դուրս գալ նացիօնալիստների կուսակցութիւնից և յարել կենտրոնին։

◆ «Р. В.»-ին հաղորդում են Պետերբուրգից, որ ժող. լուս. մինիստր Կասսօյի հրաժարականի մասին տարածված բոլոր լուրերն անհիմն են։ Կասսօյի և Գօրեմիկինի յարաբերութիւնները շատ լաւ են և, ինչպէս հաղորդում են, հէնց Գօրեմիկինն է վերջ դրել «Մեդվէդ» հիւրանոցում տեղի ունեցած միջադէպի հետևանքներին։ Ներկայումս Կասսօյի համար յատկացվում է արքունի բնակարան մինիստրութեան շէնութեան մէջ։

◆ Մոսկվայում կայացաւ սահմ.-ռամ. կուսակցութեան տեղական կօմիտէտի նիստը՝ ընտրելու պատգամաւորներ կուսակցութեան համագումարին մասնակցելու համար. ընտրվածներին դիրեկտիվ տրվեց՝ պահանջել ֆրակցիայից աւելի ընդդիմադիր քաղաքականութիւն։

◆ «Р. В.»-ն ենթարկվեց կրկին 500 ռ. տուգանքի Կիզէվէտէրի «Նոր հոսանքներ համալսարանում» յօդուածի համար։

◆ Պետերբուրգի քաղ. դուման յանձնարարել է քաղ. վարչութեանը մշակել մի շարք միջոցներ՝ օգնելու ներկայումս գործազրկութեան մատնված բանւորներին։

◆ Խարկօվում վախճանված վաճառական Շիշխարկօն Խարկովի բարեգործական ընկերութեանը և Ջերնիգովի նահանգի Կօնօտօպա քաղաքի մի քանի բարեգործական հաստատութիւններին կտակեց աւելի քան 650,000 ռուբլի։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մարտի 24-ին, Կուր գետի ափին, Մանթաշեանի այգու մօտ գտնվեց ջրահեղձի մի դիակ։ Քննութիւնը պարզեց, որ նա Թիֆլիսի քաղաքացի Արտէմ Գամբարեանն է, 48 տարեկան, արհեստով ամաններ կլայեկող։ Ինչպէս պարզվել է, նա գետի ափում ամանները լուանալու ժամանակ տարվել է ջրի ուժեղ հոսանքից և խեղդվել։

◆ Մարտի 24-ին, Թեմիր-խան-Շուրայի բնակիչ Եակօվ Վլադիսլավսկիի բնակարանում, որ գտնվում է Ջերքեզովսկայա փող. № 102 տանը, անզգուշութիւնից հրդեհ առաջացաւ, որը հանգցվեց տնային միջոցներով։ Վնասը հասնում է 150 ռ.։

ՄԱՄՈՒԼ

Մենք հաղորդեցինք անցեալները, որ Դաշնակցութիւն կուսակցութեան կիսապաշտօնական օրգան «Ազատամարտը», որ հրատարակվում է Կ. Պոլսում, այժմ ազատ մուտք ունի Ռուսաստան։ Նոյնպիսի ազատ մուտքի իրաւունք ստացել է նաև այդ կուսակցութեան պաշտօնական օրգան «Դրօշակը», որ, ինչպէս յայտնի է, հրատարակվում է Ժընևում, իբրև ամսաթերթ։ Մենք ստացանք այդ թերթի այս տարվայ առաջին համարը (յունվար)։ Իր առաջնորդող յօդուածի մէջ, որ ունի «1913—1914» վերնագիրը և մի տեսութիւն է բալկանեան պատերազմի և հայկական հարցի մասին, «Դրօշակը», ինչպէս վայել է մի յեղափոխական թերթի—երէկ վտարված, այսօր ազատ մուտք ունեցող ամեն տեղ—իր սլաքները ուղղում է հայ բուրժուազիայի դէմ և իր ամբողջ մաղձը թափում նրա գլխին նրա համար, որ «այդ բուրժուազիան խնայեց իր դրամը ազգային գործի համար և յոյսը կապեց դիւանագիտական ֆէտիշներին»։

Ահա ինչ ռճով է որակում թերթը հայ բուրժուաներին, անուանելով նրանց «գծուծ գաճաճ» և հակադրելով նրանց յոյն հարուստներին, որոնք առատօրէն զոհաբերեցին իրանց դրամը ազգային գործին.

Կատաղում էք և տառապում ամօթից ու ցասումից, երբ հայրենասիրական այդ գեղեցիկ թռիչքների հանդէպ մտաբերում էք մեր կծծի և փոքրոգի Արպագօնների դասակարգը, որ գիտէ միայն սողալ ու մուրալ, գիտէ միայն գործելու ժամն ճանապարհը, գիտէ փարել դիւանագիտական ֆէտիշներին, առանց երբէք ձգտելու ույժ ստեղծել երկրի մէջ, դիմադրական փըրկարար ույժ... Այդ վերջին դաժան պարտականութիւնը մնում է դարձեալ հայ մարտական կազմակերպութեան շլինքի վրա, որ իր համեստ, սահմանափակ միջոցներով ձգտում է գէթ յայտնի չափով ապահովել Հայաստանի ժողովուրդը՝ միշտ հնարաւոր ջարդերի սպառնալիքի հանդէպ։ Երէկվայ խուճապը Կարնոյ մէջ նոր ապացոյց է այդ արիւնոտ հնարաւորութեան... Եւ դեռ նախորդ տարին ամենաերջանիկներից մէկն է համարվում։ Իրագործվեց, կարելի է ասել, maximum-ը, գերագոյն չափը հայ ազգային համերաշխութեան։ Գէթ այսպէս կոչված «դիւանագիտական» ձեռնարկների մէջ ազգը համերաշխ էր, շատ-շատերը—լոկ խօսքով միայն։ Բուրժուազիան իր ամբողջ յոյսը դրել էր Պօղոս Նուպարի վրա և սպասում էր քաղցր անդորրութեան մէջ, առանց իր գրպանը բաց անելու անգամ ամենախաղաղ ձեռնարկների համար։

Հազարերորդ անգամը շեշտվեց հայ մտայնութեան ծանօթ գիծը,—խօսքով ամենքը ազգասէր էին։

Սակայն «գծուծ և գաճաճ» բուրժուազիային այսպէս որակելուց յետոյ, թերթը ուրիշ վերաբերմունք է ցոյց տալիս դէպի այն անձն, որ հանդիսացաւ հայ բուրժուազիայի և հոգևորականութեան ներկայացուցիչ և աշխատեց լուծել տալ հայկական հարցը դիւանագիտական միջոցով։ Ահա ինչպէս է խօսում թերթը Պօղոս Նուպար-փաշայի մասին.

Բարեբաղդաբար, Պօղոս Նուպարը յայտնվեց մի խոշոր ու տաղանդաւոր գործիչ և մէն-մենակ արեց աւելին, քան ամբողջ հայ բուրժուազիան։ Մէկ և կէս տարվան իր անդուլ, հայրենասէր գործունէութեամբ, նա գրաւեց մի էջ հայ նորագոյն պատմութեան մէջ։ Տեղը և ժամանակը չէ ի յայտ բերելու այդ գործունէութեան մանրամասները, յիշատակելու այն խուչերը, որ Նուպար հարթեց եւրոպական մի քանի դահլիճներում իր կարող ու համոզիչ տրամաբանութեամբ՝ հայկական խնդրի կանօնաւոր ընթացքը ապահովելու համար։ Դեռ հեռու ենք, անշուշտ, այդ ընթացքը կատարելապէս ապահովելուց, դեռ չը կարողացանք յօգուտ մեզ տրամադրել գերմանական դիւանագիտութիւնը, որ ունի իր որոշ գործելակերպը, բայց այնու ամենայնիւ Նուպարի աշխատանքը Բերլինում ապարդիւն չը պիտի անցնի։

Չենք բնաւ յիշատակում նոյն դիւանագիտական ասպարէզի վրա Դաշնակցութեան ձեռքով կատարված նոյնքան յամառ ու առ այժմ աջող փորձերը, որոնցով նա ձգտեց լուսաւորել դիւանագիտութեան ղեկավարներին հայկական խնդրի և պահանջների վերաբերմամբ և փարատել մի շարք վնասակար նախապաշարումներ։

Մենք պատրաստ ենք գոհունակութեամբ և նոյն իսկ խանդավառութեամբ արձանագրել և դրուատել մանաւանդ այն գործերն ու դերերը, որոնք հրապարակ են գալիս մեր շարքերից դուրս և դրվում են ի սպաս մեր բազմաչարչար ժողովրդի։ Այդ կատեգորիային է պատկանում Պօղոս Նուպարի անձնաւորութիւնը, որ չենք կարող չողջունել, իբրև մի երևոյթ մեր աղքատիկ իրականութեան մէջ, թէպէտ և տարածութիւնը մեծ է նրա և մեր հայեացքների միջև։ Թող լինեն մեզ հակառակ, թող պայքարեն շիտակօրէն մեր գաղափարների ու տակտիկի դէմ, փոյթ չէ, որքան շատ լինեն նրանք, այնքան լաւ, որովհետև իրօք յուսահատական է մարդկանց սովը, զարհուրելի է կարող, ձեռնհաս գործիչների պակասութիւնը մեր հայրենի բուրժուազիայի մէջ... Հակառակորդ մեր քաղաքական ու ընկերային գաղափարներով՝ մեզ միշտ յամենայն դէպս պիտի կապէ նրանց հետ շիտակ, անկեղծ հայրենասիրութիւնը, ազնիւ ու անձնուէր աշխատանքը յօգուտ հարազատ ժողովրդի բարօրութեան և ընդհանուր գիտակցութիւնը ազգային տարրական շահերի ու իրաւունքների։

Եթէ թերթը պախարակելի է համարում դիւանագիտական ուղին, ինչու Դաշնակցութիւնը ևս դիւանագիտական փորձեր է կատարել։

Իսկապէս մեզ համար անհասկանալի է մնում այս հակասութիւնը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 19 մարտի

Թելեթի ծխ. երկսեռ դպրոցի հոգաբարձութիւնը ստացել է նուէր նոյն դպրոցի աշ.-աշակերտուհիների զգեստների համար Բէգլար, Տիգրան, Իսահակ Վարդանեանցներից 123 արշին և Աղամ Շահպարոնեանից 73 արշին սարժինկա, որի համար հոգաբարձութիւնը յայտնում է նուիրատուներին իր անկեղծ շնորհակալութիւնը։

Նախագահ հոգաբարձութեան՝
Սարգիս ա.-ք. Շիոյեանց

—

Թիֆլիս, 21 մարտի

Հայուհեաց Որբախնամ Ընկ. վարչութիւնը ստացել է Ն. Խ. Գաբրիելեանից 10 ր.՝ Ա. Խ. Գաբրիելեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն։ Վարչութիւնս խորին շնորհակալութիւն է յայտնում նուիրատուին։

Վարչութիւն

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՈՑ.-ԴԵՄ. ԿՈՆԳՐԵՍԸ

Բրիւսէլի միջազգային սոցիալիստական կօնգրէսը հրաւէրներ է ուղարկել միջազգային սոցիալիստական կօնգրէսի համար, որ գումարվելու է օգոստոսի 22—29 (ն. տ.) Վիէննայում։

Կարդացվելու են հետևեալ զեկուցագրերը. Գերմանական րէյխստագի պատգամաւոր Մօլկենբուրգի՝ սոցիալ-դեմօկրատիայի մէջ սկսված վէճերի մասին։

Մի քանի սոցիոլօգների՝ կեանքի թանգութեան մասին։

Րէյխստագի պատգամաւոր Հաազէի՝ իմպերիալիզմի մասին։

Ժօրէսի և Կէյր-Գարտի՝ միևնոյն թեմայով։

Վանդերվէլդէի և Վուրմի՝ ալկօհօլիզմի մասին։

Վերջինը կարդացվելու է րէյխստագի պատգամաւոր Լիպկնէխտի զեկուցումը՝ ռուս քաղաքական բանտարկեալների մասին։

Աւստրիան, Գերմանիան, Միացեալ Պետութիւնները, Ֆրանսիան, Անգլիան և Ռուսաստանը ունենալու են կօնգրէսում 20-ական ձայն։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Բերլինում վախճանվեց Հէնրիխ Իբսէնի կինը 78 տարեկան հասակում։

◆ Միացեալ Պետութիւնների նախկին պրեզիդէնտ Րուզվէլտը, ինչպէս յայտնի է, բաւական ժամանակ արշաւանքի է ձեռնարկել դէպի հարաւ-ամերիկեան երկիրները։ Սակայն մինչև օրս նրա մասին ոչ մի տեղեկութիւն չէ ստացվել Նիւ-Եօրկում։ Ամերիկեան շրջաններում այդ առիթով տիրում է մեծ անհանգստութիւն։ Երկիւղ են կրում, որ մի գուցէ Րուզվէլտի հետ մի փորձանք պատահած լինի։

◆ Պարսից սահմանագլխում վերջերս սկսվել են քրդական շարժումներ։ Այդ հանգամանքը նկատի առած, Թիւրքաց զինուորական մինիստրութիւնը կարգադրել է ուժեղացնել թիւրք զօրքերի կազմը այդ մասերում և գրաւել կրկին այն դիրքերը, որոնցից թիւրք զօրքերը հեռացել էին բալկանեան պատերազմի ժամանակ։

◆ «Taeg. Rund.» հաղորդում է, որ նոր թիւրք-գերմանական ընկերութեան նպատակն է՝ կուլտուրապէս մերձեցնել երկու երկիրները, որի համար պէտք է ուղարկվեն գերմանացի բժիշկներ և պրօֆէսօրներ, կազմակերպվեն գրադարաններ, բաժանվեն գրքեր ու բրօշիւրներ պրօպագանդայի համար, հիմնվեն սինեմատօգրաֆներ, որոնք ցոյց են տալու Գերմանիայի քաղաքներն ու գիւղերը, աչքի ընկնող գործիչներին, գործարանները, զօրախաղերը և այլն։ Մի կողմից էլ լայն պրօպագանդա է մղվելու գերմանական ազդեցութիւնը Թիւրքիայում վերականգնելու համար։ Ընկերութեան նախագահն է Deutsche Bank-ի տնօրէն Հէլֆէրիխը։

◆ Հաղորդվում է, որ յայտնի աֆէրիստ Րօշէտը ներկայումս թագնվում է Լօնդօնում։

◆ Թէհրանում սպանված Թաղէօսխանի սպանութիւնը «Нов. Вр.»-ն վերագրում է «Դաշնակցութիւն» կուսակցութեանը։

◆ Գերմանացի ֆինանսիստ Շտէյման-Բուխէրը համարելով Գերմանիայի հարստութիւնը գտել է, որ ամբողջ գերմանական ազգային հարստութիւնը գնահատված է 376—397 միլիարդ մարկ։ Գերմանիայի հարստութիւնը աճում է ամեն տարի 11—12 միլիարդով։

◆ Բուդապեշտից հեռագրում են, որ ուսանողները հսկայական ցոյց կազմեցին երբեակ դաշնակցութեան դէմ։

Խմբագիր-Հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԵՔ ՏԱՐԻ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԱՆՎԵՐՋ ՏԱՆՋԱՆՔՆԵՐ

Իմ մի բարեկամը, հաւատացնելով ինձ, որ նա իր ստամոքսը բժշկել է «Դ-ր Մէյէրի Ստոմօկսիգէնի» միջոցով, ստիպեց ինձ ինքս նոյնպէս փորձել այդ դեղը։ Ես ամբողջ երեք տարի տանջվում էի քրօնիկական կապութիւնից, ստամոքսի և աղիքների կատարից։ Բոլոր դեղերը, որոնց ես առաջ ընդունել եմ, ճիշդ է, ինձ քիչ թեթևութիւն էին պատճառում, սակայն կատարելապէս չը կարողացան բուժել։ Միանգամայն այլ բան եղաւ «Դ-ր Մէյէրի Ստոմօկսիգէնը»։ Փորիս ուռածութիւնը իսկոյն եւեթ քաշվեց, իսկ ստամոքսս էլ այժմ այնպէս կանօնաւոր է գործում, որ երբէք երևակայել անկարող էի։ Ուտելուց յետոյ այժմս ես իսկական զուարճութիւն եմ զգում, մինչդեռ, առաջներում, ամեն մի կուլ գնացած կտորի համար տանջանքներով էի փոխհատուցում լինում։

Քաղուածք բժշկական մի հրատարակութիւնից՝ 10 մայիսի 1913 թ.:

«Դ-ր Մէյէրի Ստոմօկսիգէնը» պատրաստված է օզօն թթուածնի ակտիվ ներգործութեան նորագոյն հետազօտութիւնների հիման վրա։ Դեղավաճառները յայտնում են ամեն տեղերից, որ «Դ-ր Մէյէրի Ստոմօկսիգէնի» վերաբերմամբ եղած պահանջը օրէ-օր աւելանում է։ «Դ-ր Մէյէրի Ստոմօկսիգէնը» իդէալական միջոց է թէ կապութեան և թէ մարսողութեան անկանօնութեան դէմ, և միևնոյն ժամանակ թեթևացնում է այդ հիւանդութիւնների հետևանք՝ գլխացաւը, փայծաղի և երիկամունքների ցաւերը, ստամոքսի թթուածութիւնը և սրտի բաբախումը։

Իսկական Ստոմօկսիգէնի իւրաքանչիւր արկղիկի վրա փակցված է հետևեալը. «Издѣліе Лабораторіи Доктора Антона Мейеръ, С.-Петербургъ, Екатерининскій каналъ, 29».

Եթէ անունը, խեղաթիւրված է կամ լրիւ չէ գրված (Докторъ Антонъ Мейеръ), եթէ նաւցէի մէջ թանշանը փոխված է, այդ դէպքում՝ պէտք է գիտենալ, որ բացարձակ կեղծիք է կատարված։

6000 ՌՈՒԲ.

կանխիկ դրամով Դ-ր Անտօն Մէյէր կը բաժանէ Ստոմօկսիգէնով օգտվողների միջև։ Իւրաքանչիւրը բաժին կը ստանայ։

Մանրամասնութիւնները և դրամը երբ տալու մասին կարելի է տեղեկանալ բոլոր դեղատներում և դեղավաճառ խանութներում։

(П. 33182)

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ

Արժեթղթերի կուրսերը
26 մարտի

I կ. ներք. փոխ. խ. տոմս.	496 ր. — կ.
II » » »	400 ր. — կ.
III Ազնուակ. բանկ. »	369 ր. — կ.
4% Պետական րենտա	92 ր. 50 կ.
5% Արտաք. փոխառ. 1906 թ.	102 ր. 50 կ.
5% Ներքին » 1905 »	
I. հրատ.	103 ր. 37½ կ.
5% » » II հրատ.	103 ր. 37½ կ.
5% Պետ. Ազնու. բանկ. գր. թ.	100 ր. 25 կ.
4½ » » » »	90 ր. — կ.
4% » » » »	88 ր. 50 կ.
3½% » » » »	81 ր. 75 կ.
5% Գիւղ. հող. բան. վկ.	100 ր. 12½ կ.
4½% » » » »	90 ր. 25 կ.
4% » » » »	89 ր. 37½ կ.
5% Արտաք. փոխառ. 1908 թ.	105 ր. 37½ կ.

Օտարերկրեայ դրամների կուրսը

Լօնդօն 10 ֆ. ստեր.	95 ր. 05 կ.
Բերլին 100 մարկ	46 ր. 48 կ.
Պարիզ 100 ֆրանկ	37 ր. 75 կ.
Թաւրիզ 10 ղռան	1 ր. 70 կ.
Կ. Պօլիս 1 լիրա	8 ր. 65 կ.

Ամուր երաշխաւորներ



Ուղարկում եմ իմ լուսանկարը ի յիշատակ իմ ազատութեան սեռ. թուլութիւնից, որը 22 տարի շարունակվում էր։ Շատ և շատ ույժ և սպերմին եմ կորցրել այդ ժամանակամիջոցում։ Երբէք յոյս չունէի իմ քայքայված կազմուածքը վերականգնելու, սակայն երբ ստացայ Ձեզանից «Բիօլա-Լաալէյը», երկու շաբաթվայ ընթացքում կարծես ամուր երաշխաւորներ առան իմ ձեռքերն իրանց մէջ։ Անհուն և ռուսական շնորհակալութիւն։ Խորհուրդ եմ տալիս բոլոր թուլակազմերին և քայքայված կազմուածք ունեցողներին՝ Ձեր ոսկեթել թանգագին ֆիրմային դիմել։ Պ. Բարանկօվ։

Եթէ Դուք հիւանդ էք ընդհանուր կամ սեռական թուլութեամբ, ունէք գլխացաւ, անքնութիւն, արեան պակասութիւն, տանջվում էք օնանիզմից ու նրա հետևանքներից, ունէք վախկոտութիւն, թոյլ յիշողութիւն, վեներակ. հիւանդ. հետևանքներ, եթէ Դուք ջղային էք, գրգռվող, յոգնած, խնդրեցէք դեղատանը մի տուփ «Բիօլա», սակայն իսկական «Բիօլա-Լաալէյ»։ Դուք այնպիսի փայլուն հետևանք կը ստանաք, որպիսին ստացել է պ. Բարանկօվը։ Դա յայտնի դեղ է նէվրաստէնիայի դէմ և միանգամայն անվնասակար է։ Տեղեկ. համար կարելի է դիմել՝ С.-Петерб., отд. 3 частн. почт. ящ. № 371.

(П. 34086)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԱՇՈՏ ԵՐԿԱԹ
ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ
և
Քիւրդ-օղլու հէքիաթը

Գինն է երկու գրքի, պօստի ծախքով միասին, 1 ր. 50 կ.։ Կարելի է մարկաներով։ Դիմել՝ Тифлисъ, книж. маг. «Гуттенбергъ».
(օ. մ.) Г. И Галустяну. 269. 3—2

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին ջղային և երեխայոց հիւանդութ.։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—10—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—32

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում, Բէբուտօվսկայա փող. № 38.
Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլեքտրօթէրապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը
Տելէֆօն № 388.
(ա. օ.) 112. 100—34

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է Թիֆլիսում միակ ռուսերէն լեզուով լոյս տեսնող, ԱՄԵՆԻՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ, բժշկական ամսագիր
„ЖУРНАЛЪ-ЛЕЧЕБНИКЪ“-ի
1914 թ. բաժանորդագրութիւնը.

Ամսագրի նպատակն է՝ հիւանդութիւնների նախազգուշացումն և առողջութեան պահպանումն։

Ամսագրի մէջ, յայտնի բժիշկների աջակցութեամբ, պարզ և հասկանալի լեզուով բացատրվում է այն բոլորը, ինչ որ անհրաժեշտ է առողջութեան և կեանքի երկարացման համար։

Բաժանորդագինն է ամբողջ տարվայ համար միայն «օրացոյց-բժշկարան» պրեմիայով 1 ր., (վերադիր վճ. 1 ր. 20 կ.), իսկ 3 ՊՐԵՄԻԱՅՈՎ 2 ր.

1-ին պրեմիան պատի գեղեցիկ «Օրացոյց բժշկարան» 1914 թ., իսկ 2-րդ և 3-րդ պրէմիան բաժանորդների ցանկութեան և ընտրութեան համաձայն կուղարկվեն 2 հատ հետևեալ գրքերից. 1) Домашній лечебникъ (առանձին արժէ 1 ր.), 2) Грѣхи молодости (лечебникъ секр. болѣзней 1 р.), 3) Лечебникъ домашнихъ животныхъ (1 р. 25 к.), 4) Искусственное безплодіе (1 р. 25 к.), 5) Самоучитель гипнотизма (2 р.), 6) (Полный дѣловой письмовникъ (1 р.), 7) Поваренная книга для хозяекъ (1 р.). Պրէմիաները պատրաստ են և կուղարկվեն բոլորովին ձրի լոյս տեսած համարների հետ՝ բաժանորդագինը ստանալուց անմիջապէս։

Բաժանորդագրվել կարելի է և վերադիր վճարով՝ (налож. плат.) 20 կ. աւելի արժէքով, այսինքն բաժանորդները վճարում են պօստին պրեմիաները ստանալուց 2 ր. 20կ.։ Հասցէն՝ Тифлисъ—М., Вознесенская ул. № 8, главная к-ра ред. „Журналъ-Лечебникъ“. Թիֆլիսում բաժանորդագրութիւնը ընդունվում է նոյնպէս և Կենտրոնական գրավաճառանոցում։
(հ. կ.) 249. 10—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՈՒՂԱՐԿՎԵՑ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ
ՆՈՐ-ՀՈՍԱՆՔ
1914 մարտ № 3.
(176 ՄԵԾԱԴԻՐ ԷՋ)

1) Ազատութեան Արշալոյսին՝ Ա-րաս, 2) Սիրում եմ... (բանաստ.)՝ Լէյլի, 3) Գիւղի բժիշկը՝ Վ. Նուբեան, 4) Խայեամ՝ թարգմ. բնագրից Ց. Զ. Միրզայեան, 5) Աստղ աղջիկ՝ Բ. Խարայեան, 6) Հեռաւոր ձայներ (Աշնան երգերից) Ն. Կօրէյկի թարգմ. Զելլօյ, 7) Զատիկը սև (Պատկեր)՝ Ար. Յովհաննիսեան, 8) Կռապաշտը (բանաստ.)՝ Լէյլի, 9) Յուշեր Տաճկա-Հայաստանի ճանապարհորդութիւնից՝ Ա-Դօ, 10) Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում, 11) Աւետիք Արասխանեան՝ Ա. Տէրտէրեան, 12) Ստանիսլաւ Պշիբիշևսկի՝ Սուրխաթեան, 13) ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝ 1) Հայկական հարցը և Պօղոս Նուպար փաշան՝ Մ. Յար. 2) Ե. Ֆրանգեան՝ Գերմաներէն-հայերէն բառարան՝ Մ. Յար. 3) Գէորգ Տէր-Ղեւոնդեան (Գեօ-Ղէօ), Աշխարհաշունչ (մատեան հաւաքածու նիւթապաշտ)՝ Մ. Ս., 14) ՌՈՒՍ ԿԵԱՆՔ՝ Ա. Ադամեան, ՎՐԱՑ ԿԵԱՆՔ՝ Բ. Տ., 16) ԳԻՏԱԿԱՆ ՔՐՕՆԻԿՕՆ. Աւետիք Տէր-Պօղոսեան, 17) Զանազան նկատողութիւններ՝ խմբագրութիւն, 18) Գրքեր և պարբերականներ, 19) Պատկերներ՝ Էրնստ Հէկկէլ, 20) Յայտարարութիւններ, 21) Բովանդակութիւն։

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է № 4

Շարունակվում է 1914 թ. բաժանորդագրութիւնը

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ՝ Ռուսաստան—տարեկ. 7 ր., կէս տարվ. 4 ր., երեք ամսվ. 2 ր. 25 կ.
Արտասահման » 24 ֆր., » » 14 ֆր., » » 8 ֆր.

Դրամ և նիւթեր ուղարկել հետևեալ հասցէով. Тифлисъ, Редакція «Норъ-Осанкъ», Сергіевская № 14. Արտասահմանից՝ Tiflis (Russie, Caucase) Rédaction de la revue «Nor-Hossank».

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
(հ. կ.) 271. 3—2

ՎԱՐԴԻ ԲԻՒՐԵՂԵԱՅ ՍԱՊՈՆԸ
Գործ են ածում ամենքը, որոնք գիտեն գնահատել գեղեցկութիւնը։

Միակ գործարանատէր

ՖԵՐԴ. ՄՈՒԼՀԵՆՍ
Պարֆիւմէրիա
№ 4711.
Կեօլն. Րեյն.
հիմն. 1792 թ.
Կտորի գինը 25 կոպ.

Շնորհիւ իր մէջ պարունակող մեծ քանակութեան գլիցէրինի, «№ 4711 վարդի բիւրեղեայ սապոնը» կանօնաւոր գործածողները պարտական են նրան իրանց՝ պատանեկան հասակին յատուկ՝ երեսի գոյնով, թաւշի նման կակուղ, մաքուր և քնքուշ կաշւով, որոնք իսկական գեղեցկութեան նշանաբանն են կազմում։

Զարմանալի կակուղ փրփուր։ Հիանալի հոտ։ Մեծ տնտեսողութիւն։ [illegible] «№ 4711» մարկայով։

(Մ. 544862) 16—12

„ԷԿՍԵԼԱՆՍ“
ԽԱՆՈՒԹ
ԱՏ. Ա. Է. եւ Ա. Դ. ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆՆԵՐԻ եւ ԸՆԿ.
Թիֆլիս, Գօլօվինսկի պր., տ. Մանթաշեանի, Թիֆլիսի Ժողովարանի ներքև, տէլ. 6—96.
ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿԻ
ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ, ԿԱՆԱՆՑ եւ ԵՐԵԽԱՆԵՐԻ պատրաստի հագուստեղէն
ստացած լինելու, նոյնպէս եւ Զատիկը մօտ լինելու պատճառով,
ՄԵՆՔ ՆՇԱՆԱԿԵԼ ԵՆՔ
ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ
ԽՈՇՈՐ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ

Նոյնպէս ստացված են մեծ քանակութեամբ ռուսական և արտասահմանեան ընտիր կտորներ ամեն տեսակ պատուէրների համար, որ կը կատարվեն փորձված դերձակ-վարպետների հսկողութեան տակ։

Շտապեցէք պատուէրները կատարել, որոնք կատարվում են 24 ժամվայ ընթացքում։ [illegible]

ԳՆԵՐԸ ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ

247. 50—4

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный